Հանրակրթական «Հայոց պատմություն» առարկայի
ուսումնառության հայեցակարգ
(նախագիծ)

Դասընթացի նպատակը

«Հայոց պատմություն» առարկայի նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Հիմնական դպրոց վերջնարդյունքներ

- ✔ Հետազոտի հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքը, ձեռքբերումներին ու բացթողումները
- ✔ հասկանա պատմական իրադարձությունները, երևույթները, փաստերը, դրանց փոխկապակցվածությունն ու պատճառահետևանքային կապերը
- ✔ ցույց տա հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ
- ✔ Զարգացնի քննադատական մտածողությունը, հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու, լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումնեևը հիմնավորելու, որոշումներ կայացնելու կարողություններն ու հմտությունները:
- ✔ ցույց տալ սերունդների կապը պատմության մեջ,

Ավագ դպրոց վերջնարդյունքները

- ✔ Տարանջատի հայոց պատմության առանցքային հայեցակարգային շրջափուլերը, որոնք ազդեցություն են ունեցել հայոց պատմության զարգացման ուղղությունների վրա:
- ✔ Վերլուծի պատմական զարգացումների խորքային պատճառները
- ✔ Բացահայտի պատմական գործընթացների պատճառա-հետևանքային կապերը, առօրեական կյանքի առանձնահատկությունները,

- ✔ Իմանա տնտեսական համակարգերի առնձնահատկությունները, դրանց արտացոլումը հասարակական-քաղաքական զարգացումների վրա
- ✔ Ձեռք բերի գիտելիք մշակութային, հայ իրականության մեջ ընկերային կյանքի առանձնահատկությունների վերաբերյալ, ներկայացնի դա համաշխարհային զարգացումների համատեքստում
- ✔ Ըմբռնի պետական կառավարման համակարգի փոխակերպումները հայ հասարակական քաղաքական մտքի մոտ
- ✔ Վերլուծի Հայոց պատմության առանցքային խնդիրների պատճառա-հետևանքային կապերը, մատնանշի լուծման հնարավոր տարբերակները
- ✔ Ձևավորի վերաբերմունք սեփական պետության, մշակույթի, պատմության և ապագայի տեսլականի վերաբերմունք

1. **«Հայոց պատմություն» առարկայի, դասընթացի ընդհանուր բնութագիրը**

Ա. Դասընթացի արդիականությունը

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն՝ նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Այն հիմք է յուրաքանչյուր քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության: Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն ունի իր յուրահատուկ դերակատարումը համաշխարհային քաղաքակրթության պատմության հոլովույթում: Սրանով է կանխորոշվում այդ անձի, քաղաքացու և պետության դերակատարումը համաշխարհային գործընթացներում:

Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցությունն ու մտածողություն, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող անձ ու քաղաքացի:

Բ. Ծրագրի առանձնահատկությունները առարկայի ծրագրի առանձնահատկությունները, հիմնական գաղափարը, որի վրա հիմնված են առարկայի (դասընթացի) մոտեցումները, սկզբունքները, ծրագրի փուլերը, դրանց հիմնավորումը և փոխհարաբերությունները.

Հայոց պատմություն առարկայի շնորհիվ է սովորողը տեղեկանում իր նախնիների անցած պատմական ուղու մասին: Հիմնական դպրոցի VII-IX դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագիրն ընդգրկում է Հայաստանի

և հայ ժողովրդի՝ Ք.ա. IX դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածի պատմությունը:

Հիմնական դպրոցում սովորողները՝ Հայոց պատմության ծրագրի շրջանակներում կծանոթանան հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի ունեցած դժվարություններին ու կորուստներին:

Հանրակրթական միջին դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի ծրագրի կազմման հիմքում դրվել է գծային մոդելը, պահպանված է ժամանակագրական հաջորդականության սկզբունքը:

Ավագ դպրոցում՝ Հայոց պատմության ծրագրի կազմման հիմքում շեշտը դրվելու է արդի աշխարհում առկա խնդրահարույց թեմաների ուսումնասիրության՝ դրանց պատճառա-հետևանքային կապերի վեր հանման և քննադատական վերլուծության մեթոդի վրա:

Պատմության հետազոտման վերոնշյալ սկզբունքները կնպաստեն սովորողի կողմից պատմությունը համակողմանի ուսումնասիրմանը, պատմական գործընթացների և դերակատարների ամբողջական ընկալմանը (ոչ միայն քաղաքական ու տնտեսական վերնախավի ուսումնասիրմանը), որն էլ կնպաստի լայն մտահորիզոն և քննադատական մտածողություն ունեցող անձի ձևավորմանը:

Ծրագիրը կառուցվել է հետևյալ չորս հիմնական հասկացությունների շուրջ.

1. *Պետություն,*
2. *Ինքնություն,*
3. *Մշակույթ,*
4. *Համակեցություն:*

Հայոց պատմությանը ուսումնասիրվում է հետևյալ 16 ենթահասկացությունների միջոցով.

«Կառավարում», «Զարգացում», «Փոփոխություն», «Համակարգ», «Անհատ», «Պայքար», «Պատճառ-հետևանք», «Հեռանկար», «Քաղաքակրթություն», «Հավատ», «Նորարարություն», «Ձև», «Ժամանակ, տեղ, տարածություն», «Հարաբերություններ», «Փոխկապակցվածություն», «Համագործակցություն»:

Գ.Սովորողների հետ աշխատանքի հիմնական մեթոդների և տեխնոլոգիաների, գնահատման առանձնահատկությունների, եղանակների և ձևերի համառոտ նկարագրություն

Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր սովորողի ակտիվ ընդգրկվածությունը ուսուցման գործընթացում:

Դասավանդման մոտեցումներ.

Հայոց պատմություն առարկայի ուսումնառության հիմքում դրված են հետևյալ գաղափարները

1.Հասկացությունների վրա հիմնված ուսումնառություն (հասկացությունը առարկայի հիմքում ընկած մեծ գաղափարներն են, որոնք ժամանակ, տարածություն և մշակության սահմանափակումներ չունեն):

2.Հմտություններ.

- ✔ Սովորողի մոտ ուսումնական հմտությունների զարգացում. քննադատական վերլուծական, հետազոտական, ստեղծագործական մտածողություն
- ✔ Հաղորդակցական-համագործակցային հմտությունների զարգացում.
- ✔ Ինքնակազմակերպման հմտություն:

3.Ինքնուրույն հետազոտության վրա հիմնված ուսումնառություն:

4. Տարբերակված ուսումնառություն:

5. Իրական կյանքին առնչվող և խնդրահարույց հարցերի հետազոտման վրա հիմնված ուսումնառություն:

Ստուգումն ու գնահատումը նախատեսվում է իրականացնել տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով: Առարկայի ուսումնառության համար կարևորում ենք.

1. Գիտելիքի
2. Հետազոտական մոտեցումների
3. Հաղորդակցական հմտությունների
4. Մտածողության ձևերի գնահատումը:

2. Բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները.

Դասընթացի ծրագիրը կազմված է գիտամանկավարժական հիմնարար սկզբունքների՝ նյութի մատչելիություն, տարիքային համապատասխանություն, գիտամեթոդական բազմազանություն, պահանջներին համապատասխան:

«Հայոց պատմություն» առարկայի բովանդակությունը համապատասխանում է.

- գիտության, տեխնոլոգիայի և մշակույթի ժամանակակից նվաճումներն օգտագործելով վեր հանել հայ ժողովրդի պատմական անցյալը և դրա դերակատարումը համաշխարհային պատմության մեջ:
- զարգացնել սովորողի մոտ ազգային-պետական արժեքային համակարգը, ձևավորել պետականակիր արժեհամակարգ ունեցող քաղաքացու
- ձևավորել հարատև ուսումնառող քաղաքացու և անձի, ով կկարողանա անդադար փոփոխվող արդի աշխարհում ինքնահաստատվել
- սովորողը վեր է հանելու այն խնդիրները, որի հետ առնչվում է առօրյայում և հիմնվելով ձեռք բերված ուսումնական փորձառության վրա գտնել լուծման նորարար եղանակներ:
- Դասընթացը կամակերպվի մի շարք այլ գիտակարգերի ի մասնավորինս հասարակագիտական առարկաների հետ սերտ համագործակցության շրջանակներում:

«Հայոց պատմություն» առարկայի օրինակելի ծրագրեր
7-րդ դասարան
85 ժամ

Ներածություն - 4 ժամ

1. Արարատյան (Վանի) համահայկական թագավորությունը (8 ժամ)
2. Հայկազունի Երվանդյանների թագավորությունը (Ք.ա VII-III դդ.) (6 ժամ)
3. Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորությունը (14 ժամ)
4. Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը (20 ժամ)
5. Հայկական պետականության նախարարական շրջանը (V-IX դդ.) (13 ժամ)
6. Ազգային քրիստոնեական մշակույթի ձևավորումն ու հայի նոր ինքնության ստեղծումը (V-IX դդ.) (7 ժամ)
7. Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը (12 ժամ)

Պահուստային - 1 ժամ

Ներածություն- 4 ժամ

- Հայոց պատմության ուսումնասիրության առարկան, նպատակը,

պարբերացումը, ուսումնասիրման աղբյուրները:

- Հայկական լեռնաշխարհը որպես հայոց քաղաքակրթության բնօրրան: Հայերի տեղաբնիկ ծագումնաբանությունը: Հայկական լեռնաշխարհը որպես սրբազան տարածք՝ ըստ Աստվածաշնչի և մի շարք ժողովուրդների դիցաբանական պատկերացումների:
- Պատմաաշխարհագրական պայմանների ազդեցությունը հայկական քաղաքակրթության զարգացման վրա: Հայաստանի պատմավարչական բաժանումները հնագույն շրջանից մինչև այսօր:

Վերջնարդյունք

- Ներկայացնի Հայոց պատմության ուսումնասիրության առարկան, նպատակը, հայոց պատմության փուլերն ընդգրկող ժամանակագրական շրջանակները, բացատրի Հայոց պատմության պարբերացումը, բովանդակությունը և առանձնահատկությունները, ճանաչի ուսումնասիրման աղբյուրները:
- Նկարագրի հայոց հայրենիքը, սահմանները, փաստերով հիմնավորի հայերի տեղաբնիկ ծագումնաբանությունը և Հայկական լեռնաշխարհը որպես հայոց քաղաքակրթության բնօրրան, արտահայտի սեփական տեսակետ հայ ժողովրդի առաքելության, մեր հայրենիքի սրբազան տարածք լինելու վերաբերյալ:
- Ներկայացնի և համեմատի Հայաստանի պատմավարչական բաժանումները հնագույն շրջանից մինչև այսօր:

Թեմա 1
Արարատյան (Վանի) համահայկական թագավորությունը: (8 ժամ)
Նպատակ
• Ձեռք բերել գիտելիքներ Արարատյան (Վանի) համահայկական թագավորության ժամանակաշրջանում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, ակնառու գործիչների վերաբերյալ, համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, կարծիք հայտնել դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ, գնահատել Արարատյան թագավորության քաղաքակրթական ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ: • Ըմբռնել և արժևորել Արարատյան թագավորության ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: • Ձևավորել և զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար

սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ։

Վերջնարդյունք

1. Նկարագրի իրադրությունը տարածաշրջանում Ք.ա. IX-VI դարերում, Արարատյան (Վանի) թագավորության ներքին և արտաքին իրավիճակը, բացատրի հարաբերությունները հարևան երկրների, ժողովուրդների և տարածաշրջանում նոր ստեղծված պետական կազմավորումների հետ, փորձի ուրվագծել հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքնային տարբերակներ։
2. Ներկայացնի և բացատրի Արարատյան (Վանի) թագավորության պատմաշխարհագրական միջավայրը, կազմավորման, վերելքի նախադրյալները, զարգացման ընթացքը, առանձնա-հատկությունները, թուլացման և անկման պատճառները, արժևորի անկախ ու զորեղ պետություն ունենալու անհրաժեշտությունը, գնահատի թագավորության թողած ազդեցությունը աշխարհում, տեղն ու դերը հայոց պատմության մեջ։
3. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, արդյունքներն ու հետևանքները, հետևություն-ներ անի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածության վերաբերյալ, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձու-թյունների և երևույթների հետ։
4. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների, բնութագրի և գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները։
5. Ներկայացնի և համեմատի Արարատյան (Վանի) թագավորության նշանավոր արքաների՝ պետության անվտանգության և հզորացման ձեռնարկները, փորձի կապեր գտնել արդի գործիչների ձեռնարկների հետ, գնահատի Տուշպա Վան մայրաքաղաքի, Արմավիր քաղաքի, Էրեբունի բերդաքաղաքի դերն ու նշանակությունը Հայոց պատմության մեջ։
6. Նկարագրի Արարատյան (Վանի) թագավորության պետական կառավարման համակարգը, տնտեսական կյանքը, ընկերային կառուցվածքը, համակեցութային հարաբերությունները, առօրյա կյանքն ու կենցաղը, փորձի կապեր գտնել իր ներկա կյանքի հետ։

7. Ներկայացնի և արժևորի Արարատյան (Վանի) թագավորության քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, փորձի համեմատել տվյալ ժամանակաշրջանի այլ քաղաքակրթական ձեռքբերումների հետ, գիտակցի ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը։
8. Փորձի կապեր գտնել Արարատյան (Վանի) համահայկական թագավորության ու արդի գործընթացների և զարգացումների միջև, գտնի իր և սերունդների կապը պատմության մեջ, ընբռնի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը։
9. Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները։
10. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական պարագաներ, դրսևորի հետազոտելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք։
11. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ։

Թեմայի բովանդակություն

- Արարատյան (Վանի) համահայկական թագավորության ձևավորման աշխարհագրական միջավայրը. ներքին և արտաքին նախադրյալները
- Թագավորության կայացումն ու վերելքը։ Տուշպա-Վանը հայոց առաջին մայրաքաղաք։ Արքաների բարեփոխումները
- Թագավորության վերածումը Առաջավոր Ասիայի հզորագույն տերության։
- Ներքին և արտաքին մարտահրավերներ։ Պայքարն արտաքին ուժերի դեմ
- Թագավորության թուլացումն ու անկումը
- Թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսությունը, առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները
- Արարատյան (Վանի) համահայկական թագավորության քաղաքակրթական ժառանգությունը

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	**Ընդհանրական խաչվող հասկացություններ**
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) • աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում	• **Համակարգ (Պետություն)** Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ։ • **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, ընդհանրությունները,

• ուրվագծային քարտեզների հետ աշխատանք • ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք • սահիկաշարերի պատրաստում • պաստառների ձևավորում • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում • թեստային աշխատանքերի կատարում • երևակայական ճանապարհորդություն • ֆիլմերի դիտում և քննարկում • էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում • խաղեր մրցույթներ, վիկտորիաներ • հանդեսներ, միջոցառումներ • բանավեճեր, քննարկումներ • ինքնաշեն նյութերի ստեղծում • նկարի վերլուծություն • խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում	առանձնահատկությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: • **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: • **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: • **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու, պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրներ և ժողովուրդներ (Ասորեստան, սկյութներ, կիմերներ), հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ **Աշխարհագրություն** - Արարատյան (Վանի) թագավորության Ասորեստանի տերության պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզներ **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր» թեմա **Հայոց լեզու** – Լեզու և գիր, գրային համակարգեր, գրանյութ բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի** –նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և առասպելներ	

Գրականություն - հայոց պատմության նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ **Մաթեմատիկա** – հայոց պատմության առանցքային իրադարձությունների տարեթվերի հաշվման և տարբեր չափումների վերաբերյալ առաջադրանքներ, խնդիրներ **ՆԶՊ**- զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն, **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 2
Հայկազունի Երվանդյանների թագավորությունը (Ք.ա VII-III դդ.) (6 ժամ)
Նպատակ
• Ձեռք բերել գիտելիքներ Ք.ա VII-III դդ. հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, ակնառու գործիչների վերաբերյալ, համեմատել տվյալ ժամանակա-շրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, կարծիք հայտնել դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ, գնահատել Երվանդյան Հայաստանի քաղաքակրթական ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ: • Ըմբռնել և արժևորել Հայկազունի Երվանդյանների թագավորության ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: • Ձևավորել և զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:
Վերջնարդյունք
1. Նկարագրի իրադրությունը տարածաշրջանում Ք.ա VI-III դարերում, Հայկազունի Երվանդյանների թագավորության ներքին և արտաքին իրավիճակը, բացատրի

հարաբերությունները հարևան երկրների, ժողովուրդների և տարածաշրջանում նոր ստեղծված պետական կազմավորումների հետ, փորձի ուրվագծել հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքնային տարբերակներ:

2. Ներկայացնի և բացատրի Հայկազունի Երվանդյանների թագավորության պատմաշխարհագրական միջավայրը, Հայկազունիներին իշխանության անցման, թագավորության վերելքի նախադրյալները, թուլացման և անկման պատճառները, գնահատի թագավորության տեղն ու դերը հայոց պատմության մեջ:
3. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, արդյունքներն ու հետևանքները, հետևություններ անի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածության վերաբերյալ, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ:
4. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների, բնութագրի և գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:
5. Ներկայացնի և համեմատի Հայկազունի Երվանդյանների արքայատոհմի նշանավոր արքաների՝ պետության անվտանգության և հզորացման ձեռնարկները, փորձի կապեր գտնել արդի գործիչների ձեռնարկների հետ, գնահատի Արմավիր,Երվանդաշատ մայրաքաղաքների դերն ու նշանակությունը Հայոց պատմության մեջ
6. Ներկայացնի և արժևորի Հայկազունի Երվանդյանների թագավորության մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, գիտակցի մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
7. Նկարագրի Հայկազունի Երվանդյանների թագավորության պետական կառավարման համակարգը, տնտեսական կյանքը, ընկերային կառուցվածքը, համակեցութային հարաբերությունները, առօրյա կյանքն ու կենցաղը, փորձի կապեր գտնել իր ներկա կյանքի հետ:
8. Փորձի կապեր գտնել Հայկազունի Երվանդյանների թագավորության ու արդի գործընթացների և զարգացումների միջև, գտնի իր և սերունդների կապը պատմության մեջ, ընբռնի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
9. Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները:
10. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական պարագաներ, դրսևորի հետազոտելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք:
11. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

Թեմայի բովանդակություն

● Հայկազունի Երվանդյանների թագավորության ձևավորման աշխարհագրական միջավայրը. ներքին և արտաքին նախադրյալները: Վանի թագավորությունից անցումը Հայկազունի Երվանդյանների թագավորության ● Հայաստանի և Աքեմանյան Պարսկաստանի հարաբերությունները: Հայկական պետականությունը Աքեմենյան տերության կազմում ● Երվանդյանների թագավորության անկախացումը: Հայկական թագավորությունները Ք.ա. III դարում: Ներքին և արտաքին մարտահրավերները ● Հայկազունի Երվանդյանների թագավորության տնտեսությունը, հասարակական կյանքը, առօրյա կյանքն ու կենցաղը ըստ պատմական աղբյուրների (Քսենոփոն), պետական կարգը, բանակը: ● Հայկազունի Երվանդյանների թագավորության մշակութային ժառանգությունը	
Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	**Ընդհանրական խաչվող հասկացություններ**
● ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում ● սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն ● հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) ● աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում ● ուրվագծային քարտեզների հետ աշխատանք ● ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք ● սահիկաշարերի պատրաստում ● պաստառների ձևավորում ● նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում ● թեստային աշխատանքերի կատարում ● երևակայական ճանապարհորդություն ● ֆիլմերի դիտում և քննարկում ● էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում ● խաղեր մրցույթներ, վիկտորիաներ	● **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, ընդհանրությունները, առանձնահատկությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: ● **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: ● **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: ● **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու

• հանդեսներ, միջոցառումներ • բանավեճեր, քննարկումներ • ինքնաշեն նյութերի ստեղծում • նկարի վերլուծություն • խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում	համաշխարհային մշակութային արժեքները հանրահռչակելու, պահպանելու, զարգացնելու և փոխանցելու անհրաժեշտությունը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրներ և ժողովուրդներ (Ասորեստան, Մարաստան, Աքեմենյան տերություն, Մակեդոնիա, Սելևկյան պետություն), հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ **Աշխարհագրություն** - Հայկազունի Երվանդականներ թագավորության, Սելևկյան պետության, Մակեդոնական կայսրության, Աքեմենյան տերության պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզներ **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր» թեմա **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և առասպելներ, ավանդազրույցներ **Գրականություն** - հայոց պատմության նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46	

Թեմա 3
Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորությունը (14 ժամ)
Նպատակ

- Ձեռք բերել գիտելիքներ Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության ժամանակաշրջանում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, ակնառու պատմական գործիչների վերաբերյալ, համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, կարծիք հայտնել դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ, գնահատել Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության քաղաքակրթական ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ:
- Ըմբռնել և արժևորել Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
- Ձևավորել և զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:

Վերջնարդյունք

1. Նկարագրի իրադրությունը տարածաշրջանում Ք.ա III-I դարերում, Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության ներքին և արտաքին իրավիճակը, բացատրի հարաբերությունները հարևան երկրների, ժողովուրդների և տարածաշրջանում նոր ստեղծված պետական կազմավորումների հետ, փորձի ուրվագծել հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքնային տարբերակներ:
2. Ներկայացնի և բացատրի Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության պատմաշխարհագրական միջավայրը, կազմավորման, հզորացման նախադրյալները, կայսրության վերածվելու ընթացքը, աշխարհակալ տերությունը, զարգացման առանձնահատկությունները, թուլացման ու անկման պատճառները, արժևորի անկախ ու զորեղ պետություն ունենալու անհրաժեշտությունը, գնահատի կայսրության թողած ազդեցությունները աշխարհում, տեղն ու դերը հայոց պատմության մեջ:
3. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, արդյունքներն ու հետևանքները, հետևություններ անի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածության վերաբերյալ, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ:
4. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների, բնութագրի և գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:
5. Ներկայացնի և համեմատի Արտաշեսյան արքայատոհմի նշանավոր արքաների՝ պետության անվտանգության և հզորացման ձեռնարկները, փորձի կապեր գտնել արդի գործիչների ձեռնարկների հետ, գնահատի նրանց կողմից կառուցված Արտաշատ և

Տիգրանակերտ մայրաքաղաքների դերն ու նշանակությունը Հայոց պատմության մեջ:

6. Նկարագրի Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության պետական կառավարման համակարգը, տնտեսական կյանքը, ընկերային կառուցվածքը, համակեցութային հարաբերու-թյունները, առօրյա կյանքն ու կենցաղը, բացատրի նախորդ ժամանակաշրջանների հետ դրանց նմանություններն ու տարբերությունները, փորձի կապեր գտնել իր ներկա կյանքի հետ:
7. Ներկայացնի ազգային մշակույթի զարգացման առանձնահատկությունները և ձեռքբերումները հելլենիստական դարաշրջանում, համեմատի հելլենիզմի դրսևորումները Հայաստանում Երվանդունիների և Արտաշեսյանների օրոք. (արքունիքը որպես մշակութային կյանքի կենտրոն, կառավարման համակարգ, քաղաքաշինություն, կրոն, արվեստ և մշակույթ):
8. Ներկայացնի և արժևորի Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, փորձի համեմատել տվյալ ժամանակաշրջանի և հայոց այլ քաղաքակրթական ձեռքբերումների հետ, գիտակցի ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
9. Փորձի կապեր գտնել Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության ու արդի գործընթացների և զարգացումների միջև, գտնի իր և սերունդների կապը պատմության մեջ, ընբռնի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
10. Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները:
11. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական պարագաներ, դրսևորի հետազոտելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք:
12. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

Թեմայի բովանդակություն

Արտաշեսյանների քաղաքակրթական կառույցը

- Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության ձևավորման աշխարհագրական միջավայրը. պետության կազմավորման ներքին և արտաքին նախադրյալները
- Արտաշես I-ը համահայկական պետության հիմնադիր: Հայկական հողերի միավորումը
- Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Արտաշես I բարեփոխումները
- Հայկական աշխարհակալ ամբողջական պետականության ստեղծումը. ձևավորումը և կառույցը
- Տիգրան Մեծը արքայից արքա. քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային գործունեությունը: Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնադրումը
- Հայկական աշխարհակալ տերությանը սպառնացող մարտահրավերները. հայ-

հռոմեական պատերազմները, Արտաշատի պայմանագիրը
- Հայկական պետությունը աշխարհակալ տերությունների թատերաբեմ: Արտավազդ II արքայի դիվանագիտական ձեռքբերումները
- Հայաստանը ինքնուրույն դերակատար աշխարհաքաղաքական իրողություններում:
- Արտաշեսյանների թագավորության թուլացումն ու անկումը
- Առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները Արտաշեսյանների թագավորության ժամանակաշրջանում
- Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության քաղաքակրթական ժառանգությունը

Հայոց քաղաքակրթական ձեռքբերումները հելլենիզմի դարաշրջանում

- «Հելլենիզմ» հասկացությունը և դրա դրսևորումները: Հելլենիզմը Հայաստանում Երվանդունիների և Արտաշեսյանների օրոք. արքունիքը որպես մշակութային կյանքի կենտրոն, կառավարման համակարգ, քաղաքաշինություն, կրոն և մշակույթ

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	Ընդհանրական խաչվող հասկացություններ
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) • աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում • ուրվագծային քարտեզների հետ աշխատանք • ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք • սահիկաշարերի պատրաստում • պաստառների ձևավորում • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում • թեստային աշխատանքերի կատարում • երևակայական ճանապարհորդություն	• **Համակարգ (Պետություն)** Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ: • **Կառուցվածք և գործառույթ** Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները • **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: • **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա:

• ֆիլմերի դիտում և քննարկում • էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում • խաղեր մրցույթներ, վիկտորիաներ • հանդեսներ, միջոցառումներ • բանավեճեր, քննարկումներ • ինքնաշեն նյութերի ստեղծում • նկարի վերլուծություն • խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում • ռեֆերատ	• **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: • **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: • **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Սելևկյան պետություն, Պարթևստան, Պոնտոս, Փյունիկյա, Հրեաստան, Ասորիք, Վիրք, Աղվանք, Հռոմեական կայսրություն, Եգիպտոս և այլն), հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ **Աշխարհագրություն** - Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության պատմաաշխարհագրական տարածքին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմա **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր, ավանդազրույցներ **Գրականություն** – հայոց պատմության նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ, առասպելներ **Մաթեմատիկա** – հայոց պատմության առանցքային իրադարձությունների տարեթվերի հաշվման և տարբեր չափումների վերաբերյալ առաջադրանքներ, խնդիրներ	

ՆԶՊ - զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն, **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ, թատրոն)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 4
Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը (20 ժամ)
Նպատակ
● Ձեռք բերել գիտելիքներ Մեծ Հայքի Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, ակնառու գործիչների վերաբերյալ, համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, կարծիք հայտնել դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ, գնահատել Մեծ Հայքի Արշակունիների թագավորության քաղաքակրթական ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ: ● Գնահատել Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակելու հետևանքով ազգային և քրիստոնեական արժեքների համադրման, արժեքային նոր համակարգի ձևավորման և քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը: ● Ըմբռնել և արժևորել Մեծ Հայքի Արշակունիների թագավորության ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: ● Ձևավորել և զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:
Վերջնարդյունք
1. Նկարագրի իրադրությունը տարածաշրջանում I-V դարերում, Մեծ Հայքի Արշակունիների թագավորության ներքին և արտաքին իրավիճակը, բացատրի

հարաբերությունները հարևան երկրների, ժողովուրդների և տարածաշրջանում նոր ստեղծված պետական կազմավորումների հետ, փորձի ուրվագծել հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքնային տարբերակներ։

2. Ներկայացնի և բացատրի Մեծ Հայքի Արշակունիների թագավորության պատմաշխարհագրական միջավայրը, հայոց գահին Արշակունիների հաստատման, թագավորության վերելքի նախադրյալները, զարգացման առանձնահատկությունները, թուլացման և անկման պատճառ-ները արժնորի անկախ ու զորեղ պետություն ունենալու անհրաժեշտությունը, գնահատի թագավորության թողած ազդեցությունները աշխարհում, տեղն ու դերը հայոց պատմության մեջ։
3. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, արդյունքներն ու հետևանքները, հետևություններ անի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածության վերաբերյալ, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ։
4. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների, բնութագրի և գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները։
5. Ներկայացնի և համեմատի Արշակունյաց արքայատոհմի նշանավոր արքաների՝ պետության անվտանգության և հզորացման ձեռնարկները, փորձի կապեր գտնել արդի գործիչների ձեռ-նարկների հետ, գնահատի նրանց կողմից կառուցված կամ նրանց օրոք հռչակված Վաղարշա-պատ (Վարդգեսավան) և Դվին մայրաքաղաքների դերն ու նշանակությունը Հայոց պատմության մեջ։
6. Բացատրի պարթևա-հռոմեական տասնամյա պատերազմի պատճառները, արդյունքները Արշակունիների արքայատոհմի ժառանգական դառնալու նշանակությունը, Սասանյան հեղաշրջումից հետո հայ-պարսկական հարաբերությունների վատթարացման և հայ-հռոմական հարաբերությունների սերտացման պատճառները, հետևանքներն ու արդյունքները։
7. Նկարագրի ավատատիրական կարգերի զարգացման ընթացքը, բանակը, առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները, բացատրի նոր հասարակական հարաբերությունների առանձնահատկությունները, (տնտեսության ավատականացում, պետական-քաղաքական ավատականացում, հասարակական ավատատիրական աստիճանակարգ), նախորդ ժամանակաշրջանների հետ դրանց նմանություններն ու տարբերությունները։
8. Ներկայացնի քրիստոնեության ծագումը, քրիստոնեական վարդապետության հիմքերը, հայոց եկեղեցու հիմնադիր Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների գործունեության արդյունքները, քրիստոնեության տարածումը հայերի շրջանում I-III դարերում, բացատրի Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու անհրաժեշտությունը և գնահատի քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը։
9. Նկարագրի պետության և հայոց եկեղեցու՝ որպես ազգային - հոգևոր կառույցի, փոխհարաբերությունները, միասնական ձեռնարկները IV-V դարերում, ազգային

եկեղեցու ձևավորման և կայացման ընթացքը. ազդեցության տարածումը տարածաշջանում, քննարկի պետություն-եկեղեցի համագործակցության անհրաժեշտությունն ու նշանակությունը հայապահպանության գործում: 10. Ներկայացնի և արժևորի Մեծ Հայքի Արշակունիների թագավորության քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, փորձի համեմատել տվյալ ժամանակաշրջանի և հայոց այլ քաղաքակրթական ձեռքբերումների հետ, գիտակցի ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: 11. Փորձի կապեր գտնել Մեծ Հայքի Արշակունիների թագավորության ու արդի գործընթացների և զարգացումների միջև, գտնի իր և սերունդների կապը պատմության մեջ, ընբռնի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: 12. Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները: 13. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական պարագաներ, դրսևորի հետազոտելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք: 14. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:
Թեմայի բովանդակություն
Արշակունիների քաղաքակրթական կառույցը ● Պատմաաշխարհագրական տարածքը: Աշխարհաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում: Հայկական պետությունը դրածո արքաների օրոք ● Պարթևա-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը: Արշակունիների արքայատոհմի գահակալումը Հայաստանում ● Մեծ Հայքը I դարի վերջից մինչև III դարի սկիզբը: Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը ● Սասանյան հեղաշրջումը Պարսկաստանում, դրա հետևանքները: Հայ-պարսկական և հայ-հռոմեական հարաբերությունները. Հայոց թագավորության վերականգնումը ● Ավատատիրական հարաբերությունների ձևավորումն ու առանձնահատկությունները: (պետա-կան-քաղաքական, տնտեսական (ավատականացում) և հասարակական (ավատատիրական աստիճանասանդուղք) ● Թագավորական իշխանության ամրապնդումը և Հայաստանի հզորացումը ● Նախարարների դիրքորոշումը՝ իրանամետություն և բյուզանդամետություն ● Մեծ Հայքի հզորացման հեռանկարը: Պարսկաստանի ու Հռոմի հակազդեցությունը. Մեծ Հայքի առաջին բաժանումը ● Վռամշապուհ. Պարսկաստանի և Բյուզանդիայի հետ հարաբերությունների նոր ձևաչափը ● Արշակունյաց թագավորության ներքին և արտաքին մարտահրավերները: Արշակունյաց թագավորության անկումը

- Առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանում: Համակեցական ճգնաժամը (Ղազար Փարպեցու «Արքայի դատը», Խորենացու «Ողբ»)
- Մեծ Հայքի Աշակունիների թագավորության քաղաքակրթական ժառանգությունը

Հայկական քաղաքակրթությունը միջին դարերում: Քրիստոնեությունը՝ որպես հայկական քաղաքակրթական նորացման փորձառություն

- Քրիստոնեությունը որպես դավանանք (քրիստոնեական վարդապետությունը) և քրիստոնեական եկեղեցու տարածումը Հայաստանում և հայաբնակ շրջաններում I-III դարերում:
- Հայ առաքելական եկեղեցու հիմնադրումը: Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներ
- Քրիստոնեությունը որպես հայկական պետականության ամրապնդման հիմնասյուն. Տրդատ Մեծ, Գրիգոր Լուսավորիչ
- Քրիստոնեական դավանաբանությունից դեպի ազգային եկեղեցի. (առաքյալներ, Գրիգոր Լուսավորիչ, Ներսես Մեծ, Սահակ Պարթև)
- Պետություն և եկեղեցի հարաբերությունները IV դարում և V դարի սկզբին
- Հայոց եկեղեցու դերի ու ազդեցության ընդլայնումը Հյուսիսային Միջագետքից մինչև Կովկասյան լեռներ

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	Ընդհանրական խաչվող հասկացություններ
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) • աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում • ուրվագծային քարտեզների հետ աշխատանք • ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք • սահիկաշարերի պատրաստում • պաստառների ձևավորում • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների,	• **Համակարգ (Պետություն)** Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ: • **Կառուցվածք և գործառույթ** Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները • **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: • **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և

ակնարկների պատրաստում ● թեստային աշխատանքերի կատարում ● երևակայական ճանապարհորդություն ● ֆիլմերի դիտում և քննարկում ● էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում ● խաղեր մրցույթներ, վիկտորիաներ ● հանդեսներ, միջոցառումներ ● բանավեճեր, քննարկումներ ● ինքնաշեն նյութերի ստեղծում ● նկարի վերլուծություն ● խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում ● ռեֆերատ	համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: ● **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: ● **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: ● **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Պարթևստան-Պարսկաստան, Բյուզանդիա), հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ **Աշխարհագրություն** – Մեծ Հայքի Արշակունիների թագավորության, Պարթևստանի, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեքր», «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմաներ **Հայոց լեզու** –բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և ավանդազրույցներ	

Գրականություն – հայոց պատմության նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ պատմավեպեր և այլն
Մաթեմատիկա – հայոց պատմության առանցքային իրադարձությունների տարեթվերի հաշվման և տարբեր չափումների վերաբերյալ բազմաբնույթ առաջադրանքներ, խնդիրներ
ՆԶՊ - զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն, Զորանամակ
Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ) - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր

Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ

Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները - Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 5

Հայկական պետականության նախարարական շրջանը (V-IX դդ.) (13 ժամ)

Նպատակ

- Ձեռք բերել գիտելիքներ V-IX դդ. հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, օտար տիրապետությունների դեմ մղված ազատագրական պայքարի փուլերի, կարևոր դրվագների, ակնառու պատմական գործիչների վերաբերյալ, համեմատել ազատագրական պայքարի տարբեր դրվագները, կարծիք հայտնել դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ, գնահատել V-IX դդ. ազատագրական պայքարի տարբեր դրվագների ձեռքբերումները, պատմական նշանակությունը, տեղն ու դերը հայոց պատմության մեջ:
- Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
- Ձևավորել և զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:

Վերջնարդյունքներ

1. Նկարագրի իրադրությունը տարածաշրջանում, Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը V-IX դարերում, բացատրի հարաբերությունները հարևան երկրների, ժողովուրդների և տարածաշրջանում նոր ստեղծված պետական կազմավորումների հետ, փորձի ուրվագծել հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային

տարբերակներ։

2. Ներկայացնի և բացատրի Հայաստանում Բյուզանդիայի, Պարսկաստանի, Արաբական խալիֆայության վարած քաղաքականությունը, նպատակները, հետևանքները. օտար տիրապետությունների դեմ պայքարի պատճառները, կնքված պայմանագրերը, Հայաստանի ինքնավարության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները։
3. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, շարժումները, դրանց արդյունքներն ու հետևանք-ները, հետևություններ անի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխ-կապակցվածության վերաբերյալ, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ։
4. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների, բնութագրի և գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները։
5. Ներկայացնի և քննարկի ազատագրական պայքարի ուղիների վերաբերյալ գործիչների և իշխանական տոհմերի տարբեր դիրքորոշումները (V դ.- Վարդան Մամիկոնյան, Վասակ Սյունի, IX դ. Մամիկոնյան և Բագրատունի իշխանական տոհմեր) հայտնի իր կարծիքը դրանց վերաբերյալ։
6. Ներկայացնի V-IX դարերի ազատագրական պայքարի պայմանները, համեմատի տարբեր շրջափուլերում դրանց առանձնահատկությունները, կարևոր դրվագները, պարտություններն ու հաղթանակները, արժևորի առանձին դրվագներում բոլոր կառույցների, ժողովրդի տարբեր խավերի միասնական և փոխհամաձայնեցված գործելու արդյունքները, ցույց տա ազգային, հասարակական հոգևոր, և անձնական շահերի կարևորությունը՝ դրված նպատակների իրականացման գործում։
7. Ներկայացնի և համեմատի տիեզերական և հայոց եկեղեցու ժողովները, պարզաբանի զրադաշտականության, քաղկեդոնականության նկատմամբ Հայոց եկեղեցու դիրքորոշման և տարածաշրջանում Հայոց եկեղեցու դերի ու ազդեցության ամրապնդման պատճառները։
8. Նկարագրի Հայաստանի V-IX դարերի կառավարման համակարգը, տնտեսական կյանքը, առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները, բացատրի նախորդ ժամանակաշրջանների հետ դրանց նմանություններն ու տարբերությունները, փորձի կապեր գտնել իր ներկա կյանքի հետ։
9. Գնահատի V-IX դարերի ազատագրական պայքարի արդյունքները, պատմական նշանակու-թյունը, տեղն ու դերը հայոց ազատագրական պայքարի պատմության մեջ, դասեր քաղի, հետևություններ անի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտության վերաբբերյալ։
10. Փորձի կապեր գտնել տվյալ ժամանակաշրջանի ու արդի գործընթացների և զարգացումների միջև, գտնի իր և սերունդների կապը պատմության մեջ, ընբռնի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը։
11. Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները։
12. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական

պարագաներ, դրսևորի հետազոտելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք։ 13. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ։
Թեմայի բովանդակություն
● Տարածաշրջանի քաղաքական դրությունը, Հայաստանի ներքաղաքական ու արտաքին քաղաքական իրավիճակը ● Պարսկաստանը և Մարզպանական Հայաստանը։ Հազկերտ II-ը և կայսրության քաղաքական ու հոգևոր միասնականացման քաղաքականությունը։ Կրոնափոխության ծրագիրը։ ● Վարդանանց պատերազմը։ Ավարայրի ճակատամարտը ● Վահանանց ապստամբությունը։ Նվարսակի պայմանագիրը։ Սահմանափակ ինքնիշխանության վերականգնումը Արևելյան Հայաստանում ● Եկեղեցական միասնության պառակտումը. Նիկեայից Քաղկեդոն։ Հայոց եկեղեցին և տիեզերական ժողովները։ ● Հայոց եկեղեցու հակազդեցությունը (Դվինի եկեղեցական ժողովները)։ Հայոց եկեղեցու դերն ու ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում։ (Աղվանից, Վրաց եկեղեցիներ) ● Դրությունը Արևմտյան Հայաստանում VI դ.։ Հուստինիանոսի բարեփոխումները ● Հայկական պետության վերականգնման հեռանկարը և տերությունների հակազդեցությունը։ Հայաստանի 591 թ. բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև ● Արաբական նվաճումները և Հայաստանը։ Հայկական պետականության և ինքնության փորաձաշրջանի հաջողումը ● Հայաստանը Արաբական խալիֆայության կազմում։ Հակաարաբական ապստամբությունները (VIII-XI դդ.) ● Պավլիկյան և Թոնդրակյան շարժումները ● Տնտեսությունը, առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները Հայաստանում V-IX դարերում

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	**Ընդհանրական խաչվող հասկացություններ**

• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) • աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում • ուրվագծային քարտեզների հետ աշխատանք • ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք • սահիկաշարերի պատրաստում • պաստառների ձևավորում • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում • թեստային աշխատանքերի կատարում • երևակայական ճանապարհորդություն • ֆիլմերի դիտում և քննարկում • էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում • խաղեր մրցույթներ, վիկտորիաներ • հանդեսներ, միջոցառումներ • բանավեճեր, քննարկումներ • ինքնաշեն նյութերի ստեղծում • նկարի վերլուծություն • խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում • ռեֆերատ	• **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: • **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: • **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Պարսկաստան, Վրաստան, Բյուզանդիա, Արաբական խալիֆայություն) հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ **Աշխարհագրություն** - Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-	

բարոյականություն-արժեքը» թեմաներ **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի –** նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և ավանդազրույցներ **Գրականություն** – հայոց պատմության նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ, պատմիչների գործեր, պատմավեպեր **ՆԶՊ** - զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն, **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 6
Ազգային քրիստոնեական մշակույթի ձևավորումն ու հայի նոր ինքնության ստեղծումը (V-IX դդ.) (7 ժամ)
Նպատակ
• Ձեռք բերել գիտելիքներ V-IX դարերի ազգային քրիստոնեական մշակույթի ձևավորման ու զարգացման ընթացքի, ուղղությունների, բնագավառների, ձեռքբերումների, ակնառու մշակութային գործիչների և նրանց ստեղծագործությունների վերաբերյալ, բացատրել գրերի գյուտի պատմական նշանակությունը, արժևորել ոսկեդարյան մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում: • Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի և ներկայիս մշակութային ձեռքբերումների միջև եղած բազմատեսակ կապերը, մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: • Ձևավորել և զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:
Վերջնարդյունք
1. Ներկայացնի և համեմատի V-IX դդ. ազգային քրիստոնեական մշակույթի զարգացման նախադրյալները, պայմանները, առանձնահատկությունները, օրինաչափությունները, կենտրոնները, գիտության, արվեստի կարևոր բնագավառները:

2. Ներկայացնի և արժևորի V-IX դդ. ազգային մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, գիտակցի մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
3. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ազգային-մշակութային ակնառու գործիչների, նրանց ստեղծագործությունները, բնութագրի նրանց գործունեության առանցքային դրվագները և գնահատի ներդրումը հայ և համաշխարհային մշակույթի մեջ (Մ.Խորենացի. Ա,Շիրակացի, Պ. Հայկազն, Եզ. Կողբացի և այլոք)
4. Բացատրի գրերի գյուտի պատմական նշանակությունը, գնահատի հայոց եկեղեցու դերը հայոց այբուբենի ստեղծման, Աստվածաշնչի թարգմանության, հայագիր դպրության, հայ ազգային-քրիստոնեական մշակույթի ձևավորման. զարգացման ու փոխանցման գործում:
5. Բացատրի և գնաահատի կրթական նշանավոր հաստատությունների դերն ու ազդեցությունը հայ մշակութային, քաղաքական, հասարակական կյանքում, քննարկի մշակութային գործիչների ստեղծագործություններից որոշ հատվածներ, օրինակներ բերի տարածաշրջանում հայկական մշակութակենտրոն քաղաքակրթության ներգործության վերաբերյալ:
6. Փորձի կապեր գտնել տվյալ ժամանակաշրջանի ու արդի մշակութային ձեռքբերումների միջև, գտնի իր և սերունդների կապը պատմության մեջ, ըմբռնի մշակույթի շարունակականության կարևորությունը և մշակութային ժառանգորդության յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
7. Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները:
8. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական պարագաներ, դրսևորի հետազոտելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք:
9. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

Թեմայի բովանդակություն

- Հայկական գրերի ստեղծման ծրագիրը և իրագործումը
- Հայաստանի մշակույթը V-IX դարերում:Հայկական մշակույթի ոսկեդարը (Թարգմանչաց շարժում, ինքնուրույն գրականության սկզբնավորում, պատմագրություն, փիլիսոփայություն, բնական գիտություններ, աշխարհագրություն, տոմար, իրավունք, արվեստ:
- Հայկական մշակույթի կարևոր ձեռքբերումները: Նշանավոր մշակութային գործիչներ
- Հայկական մշակութակենտրոն քաղաքակրթության ներգործությունը Հյուսիսային Միջագետքից մինչև Կովկասյան լեռներ

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	Ընդհանրական խաչվող հասկացություններ

• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) • աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում • ուրվագծային քարտեզների հետ աշխատանք • ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք • սահիկաշարերի պատրաստում • պաստառների ձևավորում • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում • թեստային աշխատանքերի կատարում • երևակայական ճանապարհորդություն • ֆիլմերի դիտում և քննարկում • էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում • խաղեր մրցույթներ, վիկտորիաներ • հանդեսներ, միջոցառումներ • բանավեճեր, քննարկումներ • ինքնաշեն նյութերի ստեղծում • նկարի վերլուծություն • խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում • ռեֆերատ	• **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: • **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն – տվյալ ժամանակաշրջանի քաղաքական և մշակութային գործիչներ, ստեղծագործություններ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր **Աշխարհագրություն** - հայ մշակութային գործիչների գորխունեություն ծավալած քավաքներին, երկրներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմա **Հայոց լեզու** – Լեզու և գիր, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի

կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի –** նշանավոր անհատների, իրադարձությունների վերաբերյալ նյութեր **Գրականություն** – պատմիչներ, թարգմանական գրականություն, աստվածաբաններ **Բնագիտություն**-տիեզերքին, երկիր մոլորակին առնչվող թեմաներ **Մաթեմատիկա** – հայոց պատմության առանցքային իրադարձությունների տարեթվերի և տարբեր չափումների տարեթվերի հաշվման վերաբերյալ առաջադրանքներ, խնդիրներ **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 45, Հ 46

Թեմա 7
Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը (12 ժամ)
Նպատակ
● Ձեռք բերել գիտելիքներ Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, ակնառու պատմական գործիչների վերաբերյալ, համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, կարծիք հայտնել դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ, գնահատել Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության քաղաքակրթական ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ: ● Ըմբռնել և արժևորել Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: ● Ձևավորել և զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:
Վերջնարդյունք
1. Նկարագրի իրադրությունը տարածաշրջանում IX-XI դարերում, Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության ներքին և արտաքին իրավիճակը, բացատրի հարաբերությունները հարևան երկրների, ժողովուրդների և տարածաշրջանում նոր ստեղծված պետական կազմավորումների հետ, փորձի ուրվագծել հարաբերությունների և

պատմական զարգացումների այլընտրանքնային տարբերակներ:

2. Ներկայացնի և բացատրի Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության պատմաշխարհագրական միջավայրը, ամրապնդման, վերելքի նախադրյալները, զարգացման առանձնահատկությունները, ենթակա թագավորությունների առաջացման, կենտրոնական պետության թուլացման և անկման պատճառները, արժևորի անկախ ու զորեղ ազգային պետություն ունենալու անհրաժեշտությունը, գնահատի թագավորության թողած ազդեցությունները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ:
3. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, արդյունքներն ու հետևանքները, հետևություններ անի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածության վերաբերյալ, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձու-թյունների և երևույթների հետ:
4. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների, բնութագրի և գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:
5. Ներկայացնի և համեմատի Բագրատունյաց արքայատոհմի նշանավոր արքաների պետության անվտանգության և հզորացման ձեռնարկները, փորձի կապեր գտնել արդի գործիչների ձեռնարկների հետ, գնահատի նրանց կողմից կառուցված կամ նրանց օրոք հռչակված Բագարան, Շիրակավան, Կարս, Անի մայրաքաղաքների դերն ու նշանակությունը Հայոց պատմության մեջ:
6. Նկարագրի Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության պետական կառավարման համակարգը, տնտեսական կյանքը, ընկերային կառուցվածքը, համակեցութային հարաբերությունները, առօրյա կյանքն ու կենցաղը, բացատրի հին և միջին դարերում դրանց նմանություններն ու տարբերությունները, փորձի կապեր գտնել իր ներկա կյանքի հետ:
7. Ներկայացնի և արժևորի Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, փորձի համեմատել տվյալ ժամանակաշրջանի և հայոց այլ քաղաքակրթական ձեռքբերումների հետ, գիտակցի ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
8. Փորձի կապեր գտնել Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության ու արդի գործընթացների և զարգացումների միջև, գտնի իր և սերունդների կապը պատմության մեջ, ընբռնի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
9. Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները:
10. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական պարագաներ, դրսևորի հետազոտելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք:
11. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

Թեմայի բովանդակություն

• Տարածաշրջանի քաղաքական դրությունը, Հայաստանի ներքաղաքական ու արտաքին քաղաքական իրավիճակը, անկախության վերականգնման նախադրյալները • Պետության վերականգնումը: Բագրատունիների արքայատոհմի հաստատումը • Պայքար երկրի անկախության ամրապնդման համար • Հայաստանի հոգևոր մշակութային վերելքը: Անին՝ Հայաստանի մայրաքաղաք • Բագրատունյաց Հայաստանի հզորացումը.ներքին և արտաքին մարտահրավերներ • Պետություն-եկեղեցի հարաբերությունները IX դարի վերջերից XI դարի սկիզբը • Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության մասնատումը • Անիի թագավորության թուլացումն ու անկումը • Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության պետական կառավարման համակարգը, բանակը տնտեսությունը • Առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում • Բագրատունյաց թագավորության քաղաքակրթական ժառանգությունը	
Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	**Ընդհանրական գաղափարներ**
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) • աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում • ուրվագծային քարտեզների հետ աշխատանք • ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք • սահիկաշարերի պատրաստում • պաստառների ձևավորում • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում • թեստային աշխատանքերի կատարում • երևակայական ճանապարհորդություն	• **Համակարգ (Պետություն)** Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ: • **Կառուցվածք և գործառույթ** Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները • **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: • **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: • **Անհատներ և հարաբերություններ**

• ֆիլմերի դիտում և քննարկում • էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում • խաղեր մրցույթներ, վիկտորիաներ • հանդեսներ, միջոցառումներ • բանավեճեր, քննարկումներ • ինքնաշեն նյութերի ստեղծում • նկարի վերլուծություն • խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում • ռեֆերատ	Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: • **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: • **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Վրաստան, Բյուզանդիա, Արաբական խալիֆայություն) հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ **Աշխարհագրություն** - Բագրատունյաց թագավորության, Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեքր», «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմա **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի –** նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և ավանդազրույցներ **Գրականություն** – հայոց պատմության նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ, պատմիչների գործեր, պատմավեպեր **ՆԶՊ** - զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն, **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող	

վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Պահուստային ժամ - 1 ժամ

Հայոց պատմություն 8-րդ դասարան
85 ժամ

Ներածություն -1 ժամ

8. Հայկական քաղաքակրթության մարտահրավերները XI-XIV դարերում. տափաստանային ցեղերը Հայաստանում (7 ժամ)
9. Կիլիկիայի հայկական պետությունը (14 ժամ)
10. Հայոց մշակույթի վերածնունդը X-XIV դարերում (8 ժամ)
11. Հայ ժողովուրդը և Հայաստանի ազատագրության ու պետության վերականգնման ձեռնարկները (XV դարի երկրորդ կեսից – XIX դարի սկիզբ) (19 ժամ)
12. Հայաստանի ազատագրության և պետության վերականգնման ձեռնարկները (XIX դարի սկզբից-XX դարի սկիզբ) (19 ժամ)
13. Պետության վերականգնման մշակութային նորացման փորձառությունը Մայր հայրենիքում և գաղթօջախներում (XVII դարից մինչ-XX դարի սկիզբ) (13 ժամ)

Պահուստային - 4 ժամ

Թեմա 8
Հայկական քաղաքակրթության մարտահրավերները XI-XIV դարերում. տափաստանային ցեղերը Հայաստանում (7 ժամ)
Նպատակ
● Ձեռք բերել գիտելիքներ XI-XIV դդ. հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, ակնառու գործիչների վերաբերյալ, համեմատել և վերլուծել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, դրանց արդյունքները, հետևանքները, գնահատել տվյալ ժամանա-կաշրջանի ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ: ● Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: ● Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:
Վերջնարդյունք
1. Նկարագրի իրադրությունը տարածաշրջանում, Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը XI-XIV դարերում, բացատրի հարաբերությունները հարևան երկրների, ժողովուրդների և տարածա-շրջանում նոր ստեղծված պետական կազմավորումների հետ, ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքնային տարբերակներ և կանխատեսի դրանց հետևանքները:

2. Ներկայացնի և բացատրի XI դարում Բյուզանդիայի վարած քաղաքականության նպատակները, հետևանքները, Հայաստանում XI-XIV դդ. մահմեդական ցեղերի տիրապետության հաստատման պատճառները, համեմատի սելջուկ-թուրքերի և մոնղոլ-թաթարների արշավանքները, դրանց նպատակներն ու հետևանքները:
3. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքները, հետևանքները, բացատրի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածու-թյունը, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ:
4. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների, բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:
5. Նկարագրի XI-XIV դդ. տնտեսական կյանքի. ընկերային կառուցվածքի, համակեցութային հարաբերությունների, առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները, բացատրի դրանց փոփոխությունները Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության շրջանի համեմատությամբ, կապեր գտնի իր ներկա կյանքի հետ:
6. Ներկայացնի և արժևորի Զաքարյան Հայաստանի ազգային մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, գիտակցի ազգային արժեքները պահպանելու, զարգացնելու հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
7. Գնահատի հայ-վրացական զինակցության և Զաքարյան իշխանական տոհմի դերը Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների ազատագրման և անկախ իշխանապետության ստեղծման գործում, արժևորի ընդհանուր թշնամու դեմ ազատագրական պայքարում ժողովուրդների միասնական և փոխհամաձայնեցված գործելու կարևորությունը:
8. Կապեր գտնի տվյալ ժամանակաշրջանի և արդի գործընթացների և զարգացումների միջև,, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:
9. Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները, օգտագործի ըստ անհրաժեշտության:
10. Օգտագործի քարտեզներ. ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք:
11. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, դրանց վերաբերյալ արտահայտի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

Թեմայի բովանդակություն

- Իրադրությունը տարածաշրջանում և Հայաստանում
- Թյուրք-սելջուկները և Հայաստանը: Զանգվածային արտագաղթը
- Հայաստանը Զաքարյանների օրոք
- Հայաստանը և մոնղոլները: Հայաստանի քաղաքական իրավիճակը XIII դարի երկրորդ

կեսին և XIV դարում ● Տնտեսությունը, առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները Հայաստանում XI-XIV դարերում	
Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	**Ընդհանրական խաչվող հասկացություններ**
● ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում ● սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն ● հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) ● աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում ● ուրվագծային քարտեզների հետ աշխատանք ● ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք ● սահիկաշարերի պատրաստում ● պաստառների ձևավորում ● նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում ● թեստային աշխատանքերի կատարում ● երևակայական ճանապարհորդություն ● ֆիլմերի դիտում և քննարկում ● էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում ● խաղեր մրցույթներ, վիկտորիաներ ● հանդեսներ, միջոցառումներ ● բանավեճեր, քննարկումներ ● ինքնաշեն նյութերի ստեղծում ● նկարի վերլուծություն ● խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում ● ռեֆերատ	● **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: ● **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: ● **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: ● **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու

	անհրաժեշտությունը:

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Սելջուկյան սուլթանություն, Ոսկե Հորդա, Վրաստան), հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ. դեպքեր փաստեր **Աշխարհագրություն** - Վրաստանի, Ոսկե Հորդայի, Սելջուկյան սուլթանության տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի** –նշանավոր անհատների, իրադարձությունների վերաբերյալ նյութեր **Գրականություն** –նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ, պատմիչների գործեր **ՆԶՊ**- ռազմարվեստ, մարտավարություն, **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ, թատրոն)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 9
Կիլիկիայի հայկական պետությունը (14 ժամ)
Նպատակ
• Ձեռք բերել գիտելիքներ Կիլիկիայում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, ակնառու պատմական գործիչների վերաբերյալ, համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծել դրանց արդյունքներն ու հետևանքները, գնահատել Կիլիկյան Հայաստանի քաղաքակրթական ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը հայոց պատմության մեջ: • Ըմբռնել և արժևորել Կիլիկիայի հայոց պետության և ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: • Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և

աշխատելու հմտություններ և կարողություններ:
Վերջնարդյունք
1. Նկարագրի աշխարհաքաղաքական իրադրությունը XI-XIV դարերում, Կիլիկյան Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը, բացատրի հարաբերությունները հարևան երկրների, ժողովուրդների և տարածաշրջանում նոր ստեղծված պետական կազմավորումների հետ, ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքնային տարբերակներ և կանխատեսի դրանց հետևանքները: 2. Ներկայացնի և բացատրի Կիլիկիայի հայոց պետության ձևավորման պատմաշխարհագրական միջավայրը, հայկական իշխանությունների առաջացման, Ռուբինյան իշխանության ամրապնդման և վերելքի նախադրյալները, թագավորության հռչակման ու զարգացման առանձնահատկությունները, թուլացման և անկման պատճառները, արժևորի Մայր հայրենիքից հեռու անկախ ու զորեղ պետության ստեղծումը, գնահատի Կիլիկիայի հայոց պետության թողած ազդեցությունները աշխարհում, տեղն ու դերը հայոց պատմության մեջ: 3. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքները, հետևանքները, բացատրի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածու-թյունը, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ: 4. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու պատմական գործիչների, բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները: 5. Ներկայացնի և համեմատի Կիլիկյան Հայաստանի նշանավոր իշխանների և արքաների պետության անվտանգության և հզորացման ձեռնարկները, փորձի կապեր գտնել արդի գործիչների ձեռնարկ-ների հետ, գնահատի Սիս մայրաքաղաքի դերն ու նշանակությունը Հայոց պատմության մեջ: 6. Նկարագրի Կիլիկյան Հայաստանում կաթողիկոսական աթոռի հաստատման գործընթացը, քննարկի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները, կրոնա-քաղաքական խմբավորումների դիրքորոշումները և դրանց ազդեցությունը պետության հետագա ճակատագրի վրա: 7. Նկարագրի պետական կառավարման համակարգի, տնտեսական կյանքի, հասարակական միջավայրի, համակեցութային հարաբերությունների առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատ-կությունները Կիլիկյան Հայաստանում. բացատրի դրանց նմանություններն ու տարբերությունները Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության շրջանի հետ, կապեր գտնի իր ներկա կյանքի հետ: 8. Ներկայացնի և արժևորի Կիլիկյան Հայաստանի քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, փորձի համեմատել տվյալ ժամանակաշրջանի և հայոց այլ քաղաքակրթական ձեռքբերումների հետ, գիտակցի

ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը։

9. Կապեր գտնի Կիլիկյան Հայաստանի ու արդի գործընթացների և զարգացումների միջև, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը։
10. Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները, օգտագործի ըստ անհրաժեշտության։
11. Օգտագործի քարտեզներ. ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք։
12. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, դրանց վերաբերյալ արտահայտի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ։

Թեմայի բովանդակություն

- Աշխարհաքաղաքական իրավիճակը։ Պատմաաշխարհագրական տարածքը։ Կիլիկիայում հայկական պետության ստեղծման ներքին և արտաքին նախադրյալները
- Ռուբինյան իշխանության առաջացումը և ամրապնդումը
- Հայոց եկեղեցու գործունեությունը Կիլիկյան Հայաստանում
- Թագավորության հռչակումը։ Ներքին և արտաքին քաղաքականությունը
- Հեթումյան արքայատոհմի հաստատումը։ Հայ-մոնղոլական պայմանագիրը
- Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները
- Կիլիկիայի հայկական պետության գոյությանը սպառնացող վտանգները
- Ներքին ճգնաժամի խորացումը։ Թագավորության թուլացումն ու անկումը, պատճառները, հետևանքները
- Կիլիկիայի հայկական պետության պետական կառավարման համակարգը, բանակը, տնտեսությունը,
- Առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում
- Կիլիկիայի հայկական թագավորության քաղաքակրթական ժառանգությունը

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	Ընդհանրական խաչվող հասկացություններ
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • հիմնախնդիրների հետազոտում	• **Համակարգ (Պետություն)** Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ։

(անհատական, զույգեևով կամ խմբային) ● աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում ● ուրվագծային քարտեզների հետ աշխատանք ● ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք ● սահիկաշարերի պատրաստում ● պաստառների ձևավորում ● նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում ● թեստային աշխատանքերի կատարում ● երևակայական ճանապարհորդություն ● ֆիլմերի դիտում և քննարկում ● էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում ● խաղեր մրցույթներ, վիկտորիաներ ● հանդեսներ, միջոցառումներ ● բանավեճեր, քննարկումներ ● ինքնաշեն նյութերի ստեղծում ● նկարի վերլուծություն ● խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում ● ռեֆերատ	● **Կառուցվածք և գործառույթ** Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները ● **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: ● **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: ● **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: ● **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: ● **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Բյուզանդիա, Խաչակիրների պետություններ, Իկոնիայի սուլթանություն, Մոնղոլական կայսրություն, Եգիպտոսի Այուբյան սուլթանություն), հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ. դեպքեր փաստեր **Աշխարհագրություն** - Կիլիկյան Հայաստանի, Բյուզանդիայի, Մոնղոլական կայսրության պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Մարդ ճաշակ-մշակույթ», «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» թեմաներ **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի** –նշանավոր անհատների, իրադարձությունների վերաբերյալ նյութեր **Գրականություն –** հեղինակներ, նշանավոր գործիչներին և իրադարձություններին նվիրված ստեղծագործություններ **ՆԶՊ** - զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ, թատրոն)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 10
Հայոց մշակույթի վերածնունդը X-XIV դարերում (8 ժամ)
Նպատակ
• Ձեռք բերել գիտելիքներ X-XIV դդ. ազգային քրիստոնեական մշակույթի զարգացման ընթացքի, ուղղությունների, բնագավառների, ձեռքբերումների, ակնառու մշակութային գործիչների և նրանց ստեղծագործությունների վերաբերյալ, համեմատել և վերլուծել Մայր հայրենիքում և Կիլիկիայում ազգային մշակույթի վերածննդի նախադրյալները, պայմանները, օրինաչափությունները, ընդհանրությունները, առանձնահատկությունները, գնահատել արծաթե դարի մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի

համատեքստում:

- Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի և ներկայիս մշակութային ձեռքբերումների միջև եղած բազմատեսակ կապերը, մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
- Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:

Վերջնարդյունք

1. Ներկայացնի և համեմատի X-XIV դդ. Մայր հայրենիքում և Կիլիկիայում ազգային քրիստոնեական մշակույթի զարգացման նախադրյալները, պայմանները, ընդհանրություններն ու առանձնահատ-կությունները, օրինաչափությունները, կենտրոնները, գիտության, արվեստի կարևոր բնագավառները:
2. Ներկայացնի և արժևորի Կիլիկիայում և Մայր հայրենիքում ազգային մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, գիտակցի ազգային արժեքները պահպանելու, զարգացնելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
3. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ազգային-մշակութային ակնառու գործիչների, նրանց ստեղծագարծությունները բնութագ-րի և համեմատի նրանց գործունեության առանցքային դրվագները և գնահատի ներդրումը հայ և համաշխարհային մշակույթի մեջ (Գր. Նարեկացի «Մատյան ողբերգության», Թ.Ռոսլին, Մ.Գոշ, Ն.Շնորհալի և այլոք)
4. Գնահատի Հայոց եկեղեցու դերը X-XIV դդ հայ ազգային-քրիստոնեական մշակույթի պահպանման, զարգացման ու փոխանցման գործում:
5. Վերլուծի և գնահատի կրթական նշանավոր հաստատությունների դերն ու ազդեցությունը հայ մշակութային, քաղաքական, հասարակական կյանքում, քննարկի մշակութային գործիչների ստեղծագործություններից որոշ հատվածներ, օրինակներ բերի տարածաշրջանում և աշխարհում հայկական մշակութակենտրոն քաղաքակրթության ներգործության վերաբերյալ:
6. Կապեր գտնի տվյալ ժամանակաշրջանի ու արդի մշակութային ձեռքբերումների միջև, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, ըմբռնի մշակույթի շարունակականության կարևորությունը և մշակութային ժառանգորդության յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
7. Բացատրի կարևոր եզրույթներն ու հասկացությունները, օգտագործի ըստ անհրաժեշտության:
8. Օգտագործի քարտեզներ. ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք:
9. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, դրանց վերաբերյալ արտահայտի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն

օգտագործելիս կատարի հղումներ:	
Թեմայի բովանդակություն	
● Հայկական մշակույթի վերածնունդը: Նախադրյալները ● Հայաստանի մշակույթը X-XV դարերում. մարտահրավերներ և պատասխաններ: Հայկական մշակույթի արծաթե դարը (գիտակրթական կառույցներ, պատմագրություն, գրականություն, իրավագիտություն, բնափիլիսոփայություն և աստվածաբանություն, արվեստ) ● Հայկական վերածննդի հիմնական ձեռքբերումները: Նշանավոր մշակութային գործիչները ● Հայկական մշակութակենտրոն քաղաքակրթության ներգործությունը Միջերկրածովյան ավազանից մինչև Հայկական լեռնաշխարհ	
Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	**Ընդհանրական խաչվող հասկացություններ**
● ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում ● սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն ● հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) ● աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում ● ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք ● սահիկաշարերի պատրաստում ● պաստառների ձևավորում ● նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում ● թեստային աշխատանքերի կատարում ● երևակայական ճանապարհորդություն ● ֆիլմերի դիտում և քննարկում ● էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում ● խաղեր մրցույթներ, վիկտորիաներ ● հանդեսներ, միջոցառումներ	● **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: ● **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:

• բանավեճեր, քննարկումներ • ինքնաշեն նյութերի ստեղծում • նկարի վերլուծություն • խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում • ռեֆերատ	
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն – տվյալ ժամանակաշրջանի քաղաքական և մշակութային գործիչներ, ստեղծագործություններ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր **Աշխարհագրություն** - Կիլիկյան Հայաստանի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Մարդ ճաշակ-մշակույթ», «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» թեմաներ **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի –** նշանավոր անհատների, իրադարձությունների վերաբերյալ նյութեր **Գրականություն** – պատմիչներ, աստվածաբաններ, ստեղծագործություններ (Գր. Նարեկացի «Մատյան ողբերգության») **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր	
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ	
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները- Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 45, Հ 46	

Թեմա 11
Հայ ժողովուրդը և Հայաստանի ազատագրության ու պետության վերականգնման ձեռնարկները (XV դարի երկրորդ կեսից – XIX դարի սկիզբ) (19 ժամ)
Նպատակ
• Ձեռք բերել գիտելիքներ XV դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի սկիզբ ընկած

ժամանակահատվածում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, Հայաստանի ազատագրության և պետության վերականգնման նպատակով իրականացված ձեռնարկների, ակնառու գործիչների վերաբերյալ, համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծել դրանց արդյունքներն ու հետևանքները, գնահատել ձեռքբերումներն ու բացթողումները, դրանց տեղն ու դերը Հայոց պատմության մեջ:

- Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի և ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
- Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:

Վերջնարդյունք

1. Նկարագրի տարածաշրջանի քաղաքական դրությունը, Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը XV դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի սկիզբ ընկած ժամանակահատվածում, բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների հետ, ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքնային տարբերակներ և կանխատեսի դրանց հետևանքները:
2. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքները, հետևանքները, բացատրի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածությու-նը, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ:
3. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու պատմական գործիչների, բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:
4. Բացատրի կաթողիկոսական աթոռի Հայաստան տեղափոխելու և Էջմիածնում վերհաստատելու անհրաժեշտությունն ու կարևորությունը, ցույց տա պետության բացակայության պայմաններում հայոց եկեղեցու ազգապահպան ձեռնարկները, գնահատի ազատագրական պայքարի նախաձեռնման, կազմակերպման և պետության վերականգնման նպատակով իրականացրած գործունեությունը:
5. Ներկայացնի XVII դարում ազատագրական շարժման աշխուժացման նախադրյալները, պայմանները, եվրոպական պետությունների հետ կապված հույսերի ձախողման և կողմնորոշման փոփոխության պատճառները, համեմատի և վերլուծի XV-XVIII դդ. ազատագրական պայքարի փուլերը, դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները, կարևոր դրվագները, պետության վերականգնման նպատակով իրականացված դիվանագիտական, ռազմաքաղաքական, տնտեսական փորձերը, և դրանց արդյունքներն ու հետևանքները:
6. Արժևորի XVIII դարի 20-ական թթ. Արցախի և Սյունիքի զինված պայքարում միասնական

և փոխհամաձայնեցված գործելու արդյունքները, ցույց տա ազգային, հասարակական հոգևոր, և անձնական շահերի միասնության կարևորությունը դրված նպատակների իրականացման գործում, գնահատի Արցախի և Սյունիքի պայքարի դերն ու ազդեցությունը հայ ազատագրական շարժման հետագա ընթացքի վրա։

7. Ներկայացնի Հայկական Հարցի ծագումը, էությունը, համեմատի լուծման ուղղությամբ իրականաց-ված ձեռնարկները, դրանց արդյունքները, բացատրի պետությունների շահերը, նրանց միջև առկա բազմատեսակ կապերի ազդեցությունը Հայկական հարցի լուծման վրա, փորձի առաջարկել տվյալ ժամանակա-շրջանում Հայկական հարցի լուծման տարբերակներ և կանխատեսել դրանց հետևանքները։
8. Գնահատի աղերսաթղթերից և խնդրագրերից անցումը ծրագրերին որպես ազատագրական պայքարի նոր ձեռքբերում, համեմատի առանձին ծրագրեր, արտահայտի դիրքորոշումներ և տեսակետներ դրանց վերաբերյալ, փորձի կազմել ծրագիր։
9. Առանձնացնի և արժևորի հնդկահայ լուսավորիչների առաջադիմական գաղափարները, աշխատությունները, պետության վերականգնման ձեռնարկները, Մադրասի խմբակի տեղն ու դերը հայ ազատագրական պայքարի և համաշխարհային պատմության մեջ։
10. Նկարագրի և մեկնաբանի խոջայական-առևտրական կապիտալի ձևավորման պայմանները, համաշխարհային առևտրի ու տնտեսության մեջ նրա ներգրավածությունը, գնահատի խոջայության դերը ազգային ինքնության պահպանման և արդիականացման գործում։
11. Նկարագրի արևելահայերի և արևմտահայերի իրավաքաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքը, հասարակական միջավայրը, համակեցութային հարաբերությունները, առօրյա կյանքն ու կենցաղը, դրանց առանձնահատկությունները, բացատրի դրանց նմանություններն ու տարբերությունները, կապեր գտնի իր ներկա կյանքի հետ։
12. Գնահատի XV դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի սկիզբ ընկած ժամանակահատվածի ազատագրական պայքարի արդյունքները, ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը հայոց ազատագրական պայքարի պատմության մեջ, դասեր քաղի. ըմբռնի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը։
13. Կապեր գտնի տվյալ ժամանակաշրջանի և արդի գործընթացների և զարգացումների միջև, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը։
14. Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները, օգտագործի ըստ անհրաժեշտության։
15. Օգտագործի քարտեզներ. ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք։
16. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, դրանց վերաբերյալ արտահայտի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ։

Թեմայի բովանդակություն
4.1. Հայկական քաղաքակրթության մարտահրավերները Նոր դարերի արշալույսին, կորուստների և վերականգնումների ժամանակաշրջան ● Տարածաշրջանի քաղաքական դրությունը, Հայաստանի ներքին և արտաքին իրավիճակը XV-XVII դարերում: Թուրք-պարսկական պատերազմները և Հայաստանը ● Կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Էջմիածնում: Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները: **4.2 Պետության վերականգնման քաղաքական ձեռնարկները** ● Հայ ազատագրական շարժման նախադրյալներն ու առանձնահատկությունները: ***Պետության վերականգնման դիվանագիտական փորձերը*** ● Պետության վերականգնման առաջին ձեռնարկները (Վասպորական, Աղթամար) ● Հայաստանի ազատագրության նոր փոլը. արևմտաեվրոպական կողմնորոշումը և գաղտնի խորհրդաժողովները (Ստեփանոս Սալմաստեցի, Հակոբ Թութունջի /Մահտեսի Մուրադ Բախիշեցի, Միքայել Սեբաստացի / Աբգար Թոխատեցի, Հակոբ Ջուղայեցի) ● Խնդրագրերից անցում ծրագրերի: Իսրայել Օրու գործունեությունը: Կողմնորոշման փոփոխուփյան պատճառները ***Պետության վերականգնման ռազմական փորձերը*** ● Ազատագրական պայքարն Արցախում, արդյունքները ● Ազատագրական պատերազմները Սյունիքում, արդյունքները ● Թուրքիայի և Ռուսաստանի շահերի բախումը Անդրկովկասում ● Հայկական ինքնավարությունն Արցախում Սյունիքում (Խամսայի մելիքություններ) ***Պետության վերականգնման փորձերը գաղթօջախներում*** ● Հովսեփ Էմինի գործունեությունը ● Մադրասի խմբակի քաղաքական հրապարակախոսությունը («Որագայթ փառաց», «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» աշխատությունները որպես հայ հասարակական - քաղաքական և իրավական մտքի դրսևորում) ● Հայաստանի ազատագրության ծրագրերը (Մ.Սարաֆյանի ծրագիրը, «Հյուսիսային» «Հարավային» ծրագրերը, Հայաստանի ինքնավարության նախագիծը) **4.3. Պետության վերականգնման տնտեսական արդիականացման փորձառությունը, հայկական առևտրական կապիտալը** ● Նոր Ջուղան և հայկական խոջայական-առևտրական կապիտալը (ձևավորումը, կարգավիճակը, ներգրավվածությունը միջազգային առևտրին, մշակութային գործունեությունը) ● Հայկական առևտրական ցանցը. աշխարհագրությունը, հանգույցներն ու համակարգող կենտրոնները, անդրազգային հարաբերությունները: Հայկական առևտրական կապիտալի ներկայությունը համաշխարհային առևտրի ու տնտեսության մեջ: ● Հայկական առևտրական ցանցի անկումը: Հայկական առևտրական կապիտալի դերակատարությունը ազգային ինքնության պահպանման և արդիականացման գործում:

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	Ընդհանրական խաչվող հասկացություններ
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) • աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում • ուրվագծային քարտեզների հետ աշխատանք • ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք • սահիկաշարերի պատրաստում • պաստառների ձևավորում • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում • թեստային աշխատանքերի կատարում • երևակայական ճանապարհորդություն • ֆիլմերի դիտում և քննարկում • էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում • խաղեր մրցույթներ, վիկտորիաներ • հանդեսներ, միջոցառումներ • բանավեճեր, քննարկումներ • ինքնաշեն նյութերի ստեղծում • նկարի վերլուծություն • խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում • ռեֆերատ	• **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: • **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: • **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: • **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:
Միջառարկայական կապերը թեմայում	

Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Սեֆյան Պարսկաստան, Օսմանյան կայսրություն, Ռուսական կայսրություն, Հնդկաստան, Եվրոպայի երկրներ) հարաբերու-թյուններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր **Աշխարհագրություն** - Սեֆյան Պարսկաստանի, Օսմանյան կայսրության, Ռուսական կայսրության տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Մարդ ճաշակ-մշակույթ», «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեքր» **«**Մարդ-իրավունք», «Մարդ-տնտեսություն», "Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Գրականություն** – գրողներ, բանաստեղծներ, հայոց պատմության նշանավոր իրադարձություններին, փաստերին, երևույթներին, և գործիչներին նվիրված ստեղծագործություններ **Արվեստ** - կրթության և մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, ձեռքբերումներ, պատմամշակութային հուշարձաններ **ՆԶՊ** - զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 12
Հայաստանի ազատագրության և պետության վերականգնման ձեռնարկները (XIX դարի սկզբից-XX դարի սկիզբ) (19 ժամ)
Նպատակ
• Ձեռք բերել գիտելիքներ XIX դարի սկզբից մինչև XX դարի սկիզբ ընկած ժամանակահատվածում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, Հայկական հարցի միջազգայնացման, Հայաստանի

ազատագրության և պետության վերականգնման նպատակով իրականացված ձեռնարկների, ակնառու գործիչների վերաբերյալ, համեմատել տվյալ ժամանակա-շրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծել դրանց արդյունքներն ու հետևանքները, գնահատել ձեռքբերումներն ու բացթողումները, դրանց տեղն ու դերը Հայոց պատմության մեջ:

- Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի և ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման
- Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:

Վերջնարդյունք

1. Նկարագրի տարածաշրջանի և Հայաստանի ներքաղաքական ու արտաքին քաղաքական իրավիճակը XIX դարի սկզբից մինչև XX դարի սկիզբ ընկած ժամանակահատվածում, բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների հետ, ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքնային տարբերակներ և կանխատեսի դրանց հետևանքները:
2. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքները, հետևանքները, բացատրի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկա-պակցվածությունը, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ:
3. Ճանաչի ակնառու պատմական գործիչների, բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:
4. Ներկայացնի և քննարկի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների արդյունքները և դրանք եզրափակող պայմանագրերը, նոր ստեղծված վարչական միավորները, Ռուսաստանի նպատակներն ու հայ ժողովրդի հուսախաբության պատճառները, համեմատի ցարական և սուլթանական կառավարությունների գաղութային հակահայ քաղաքականության հետևանքները, անի եզրահանգումներ:
5. Ներկայացնի ազատագրական շարժման ծավալման պայմանները, համեմատի և վերլուծի XIX դարի սկզբից մինչև XX դարի սկիզբ ընկած ժամանակահատվածի ազատագրական պայքարի փուլերը, դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները, կարևոր դրվագները, պետության վերա-կանգնման նպատակով իրականացված դիվանագիտական, գաղափարական, ռազմաքաղա-քական փորձերը, դրանց արդյունքներն ու հետևանքները:
6. Արժևորի Զեյթունում 1862 թ. պայքարի միասնական և փոխհամաձայնեցված գործելու արդյունքները, ցույց տա ազգային, հասարակական հոգևոր, և անձնական շահերի միասնության կարևորությունը դրված նպատակների իրականացման գործում գնահատի Զեյթունի ապստամբության դերն ու ազդեցությունը հայ ազատագրական շարժման

հետագա ընթացքի վրա։

7. Ներկայացնի Հայկական Հարցի միջազգայնացման գործընթացը, համեմատի լուծման ուղղությամբ իրականացված ձեռնարկները և կնքված պայմանագրերը, դրանց արդյունքները, բացատրի պետությունների շահերը, նրանց միջև առկա բազմատեսակ կապերի ազդեցու-թյունը Հայկական հարցի լուծման վրա, փորձի առաջարկել Հայկական հարցի լուծման տարբերակներ։
8. Քննարկի XIX դարի երկրորդ կեսին հայ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների պատճառները, խմբակների, կուսակցությունների ստեղծման անհրաժեշտու-թյունը և պայմանները, համեմատի կուսակցությունների նպատակները, ծրագրերը, գործունեությունը, արդյունքները, կապեր գտնի արդի կուսակցությունների հետ, գնահատի դրանց դերը հայ ազատագրական պայքարի պատմության մեջ։
9. Բացատրի հայդուկային շարժման առաջացման պատճառները, էությունը, նշանավոր հայդուկապետերին և նրանց ձեռնարկները, կապեր գտնի և համեմատի Արցախյան ազատամարտի հերոսների (ֆիդայիների) հետ, գնահատի հայդուկային պայքարի դերն ու նշանակությունը հայոց ազատագրական պայքարի պատոմության մեջ։
10. Ցույց տա պետության բացակայության պայմաններում, հայոց եկեղեցու ազգապահպան ձեռնարկները, գնահատի ազատագրական պայքարի կազմակերպման և պետության վերականգնման նպատակով իրականացրած գործունեությունը։
11. Նկարագրի արևելահայերի և արևմտահայերի, Զեյթունի հայ բնակչության իրավաքաղաքական սոցիալ-տնտեսական կյանքը, հասարակական միջավայրը, համակեցութային հարաբերություն-ները, առօրյա կյանքն ու կենցաղը, դրանց առանձնահատկությունները, բացատրի դրանց նմանություններն ու տարբերությունները, կապեր գտնի իր ներկա կյանքի հետ։
12. Գնահատի XIX դարի սկզբից մինչև XX դարի սկիզբ ընկած ժամանակահատվածի ազատագրական պայքարի արդյունքները, ձեռքբերումներն ու բացթողումները, տեղն ու դերը հայոց ազատագրական պայքարի պատմության մեջ, դասեր քաղի. ըմբռնի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը։
13. Կապեր գտնի տվյալ ժամանակաշրջանի և արդի գործընթացների և զարգացումների միջև, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը։
14. Բացատրի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները, օգտագործի ըստ անհրաժեշտության։
15. Օգտագործի քարտեզներ. ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք։
16. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, դրանց վերաբերյալ արտահայտի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ։

Թեմայի բովանդակություն	
5.1. Հայաստանը XIX դարի սկզբին. կայսրությունների տարածաշրջանային շահերի կիզակետում ● Տարածաշրջանի և Հայաստանի ներքաղաքական ու արտաքին քաղաքական իրավիճակը XIX դարի սկզբին: Մեծ տերությունների շահերի բախումն Անդրկովկասում ● Արևելյան Հայաստանը XIX դարի սկզբին ● Արևմտյան Հայաստանը XIX դարի սկզբին ● Հայաստանի սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական կացությունը Ռուսական և Օսմանյան կայսրությունների կազմում XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին ● Արևելահայերի և արևմտահայերի առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները XIX դարում-XX դարի սկզբին **5.2. Պետության վերականգնման դիվանագիտական փորձերը: Հայկական հարցի միջազգայնացումը** ● Ռուսաստանի և Օսմանան Թուրքիայի ռազմաքաղաքական ծրագրերը և Հայաստանը: Հայկական հարցը և Մեծ տերությունների շահերի կիզակետում (Սան Ստեֆանոյի պայմանագիրը) ● Հայկական հարցի միջազգայնացումը և Հայոց եկեղեցին. Խրիմյան Հայրիկ: Հայկական պատվիրակությունների գործունեությունը Եվրոպայում: ● Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում **5.3. Պետության վերականգնման գաղափարական նախապատրաստությունը** ● Հայ հասարակական – քաղաքական հոսանքների ձևավորումը: Գործունեությունը ● Ազատագրական խմբակները ու կազմակերպությունների ձևավորումը: Գործունեությունը ● Հայ ազգային քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Ծրագրերը: ● Հայ ազգային քաղաքական կուսակցությունների գործունեությունը **5.4. Պետության վերականգնման ռազմաքաղաքական փորձերը:** ● 1862 թ. Զեյթունի ապստամբությունը: Զեյթունի բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները: ● Ազատագրական պայքարի վերելքը Հայդուկային շարժումը (Նախադրյալներ, խմբեր, հայդուկապետեր, շարժման ծավալում, երդում, տարազ, զենքեր, աշխատանքի բաժանում): ● Ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության նոր դրսևորումը (1903 թ. հունիսի 12-ի օրենքը): Հայոց եկեղեցու պայքարը ցարական ինքնակալության դեմ ● Մարտավարության փոփոխությունը. զինված ընդհանուր ապստամբության նախապատրաստումը (Առաքելոց վանքի կռիվը, Սասունի 1904 թ ապստամբությունը)	
Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	**Ընդհանրական խաչվող հասկացություններ**

• ուսումնական նյութի բացատրում • ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգենով կամ խմբային) • աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում • ուրվագծային քարտեզների հետ աշխատանք • ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք • սահիկաշարերի պատրաստում • պաստառների ձևավորում • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում • թեստային աշխատանքերի կատարում • երևակայական ճանապարհորդություն • ֆիլմերի դիտում և քննարկում • էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում • խաղեր մրցույթներ, վիկտորիաներ • հանդեսներ, միջոցառումներ • բանավեճեր, քննարկումներ • ինքնաշեն նյութերի ստեղծում • նկարի վերլուծություն • խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում • ռեֆերատ	• **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: • **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: • **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: • **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն – տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Սեֆյան	

Պարսկաստան, Օսմանյան կայսրություն, Ռուսական կայսրություն, Եվրոպական պետություններ, ԱՄՆ), հարաբերու-թյուններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր **Աշխարհագրություն** – Ռուսական կայսրության, Օսմանյան կայսրության,պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեքր», «Մարդ-իրավունք», «Մարդ-տնտեսություն», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» թեմաներ **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Գրականություն** –գրողներ, բանաստեղծներ, հայոց պատմության նշանավոր իրադարձություններին, փաստերին, երևույթներին, և գործիչներին նվիրված ստեղծագործություններ **ՆԶՊ** - զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 13
Պետության վերականգնման մշակութային արդիականացման (նորացման) փորձառությունը Մայր հայրենիքում և գաղթօջախներում (XVII դարից մինչ-XX դարի սկիզբ) (13 ժամ)
Նպատակ
• Ձեռք բերել գիտելիքներ XVII դարից մինչև XX դարի սկիզբ ընկած ժամանակահատվածում Մայր հայենիքում և գաղթավայրերում ազգային մշակույթի զարգացման ընթացքի, ուղղությունների, բնագավառների, ձեռքբերումների, ակնառու գործիչների և նրանց ստեղծագործությունների վերաբերյալ, համեմատել և վերլուծել Մայր հայրենիքում և գաղթավայրերում ազգային մշակույթի զարգացման նախադրյալները, պայմանները, օրինաչափությունները, ընդհանրությունները, առանձնահատկությունները, գնահատել ազգային մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում: • Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի և ներկայիս մշակութային ձեռքբերումների միջև եղած բազմատեսակ կապերը, մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու,

փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: ● Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:
1. Նկարագրի և բացատրի հայկական գաղթավայրերի ձևավորման պատճառները, համեմատի տարբեր գաղթավայրերի զարգացման առանձնահատկությունները, գաղութահայ հիմնական կենտրոնները, դրանց առջև ծառացած խնդիրները, գնահատի գաղթավայրերի և Հայոց եկեղեցու առանձնահատուկ դերը գաղթավայրերում հայապահպանության և հայկական մշակույթի պահպանման ու զարգացման գործում: 2. Ներկայացնի և համեմատի տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքները, հետևանքները, բացատրի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածությունը, կապեր գտնի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ: 3. Ներկայացնի և համեմատի Մայր հայրենիքում և գաղթավայրերում ազգային մշակույթի զարգացման նախադրյալները, պայմանները, ընդհանրություններն ու առանձնահատկությունները, օրինաչափությունները, կենտրոնները, գիտության, արվեստի կարևոր բնագավառները: 4. Ներկայացնի և արժևորի Մայր հայրենիքում և տարբեր գաղթավայրերում ազգային մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, գիտակցի ազգային արժեքները պահպանելու, զարգացնելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: 5. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու պատմական գործիչների, բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները: 6. Վերլուծի և գնահատի գրատպության, հայ գրքի, հայ մամուլի, կրթական նշանավոր հաստատությունների դերն ու ազդեցությունը հայ մշակութային, քաղաքական, հասարակական կյանքում, քննարկի մշակութային գործիչների ստեղծագործություններից որոշ հատվածներ: 7. Գնահատի Հայոց եկեղեցու և Մխիթարյան միաբանության դերը հայկական մշակույթի, հայագիտության և գիտության տարբեր ճյուղերի զարգացման ու ազգային մշակույթի պահպանման գործում 8. Նկարագրի սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական միջավայրի, համակեցութային հարաբերությունների առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները գաղթօջախներում, բացատրի դրանց նմանություններն ու տարբերությունները, կապեր գտնի իր ներկա կյանքի հետ: 9. Կապեր գտնի տվյալ ժամանակաշրջանի ու արդի մշակութային ձեռքբերումների միջև, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, ըմբռնի մշակույթի

շարունակականության կարևորությունը և մշակութային ժառանգորդության յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:

10. Բացատրի կարևոր եզրույթներն ու հասկացությունները, օգտագործի ըստ անհրաժեշտության:
11. Օգտագործի քարտեզներ. ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք:
12. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, համեմատի, դրանց վերաբերյալ արտահայտի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

Թեմայի բովանդակություն

- Հայկական գաղթավայրերի առաջացման պատճառները
- Հայկական գաղթավայրերի հիմնական կենտրոնները. Սեֆյան Պարսկաստան, Օսմանյան կայսրություն, Ռուսական կայսրություն, Եվրոպա, Ասիա (աշխարհագրությունը, ազգային-համայնական կյանքի կազմակերպման սկզբունքները, ձևերը).
- Հայկական մշակույթի զարգացումը Մայր հայրենիքում և գաղթավայրերում (Կենտրոնները, զարգացման նախադրյալները, պայմանները, առանձնահատկությունները օրինաչափություն-ները):
- Գրատպությունը և տպագիր գրքի ազդեցությունը: (Հակոբ Մեղապարտ, վանանդեցիների փորձառությունը, Սիմեոն Երևանցին և Հայաստանում առաջին տպարանի բացումը)
- Հայկական մամուլի սկզբնավորումը և զարգացումը:
- Դպրոցները և կրթական գործը (Աղաբաբյան, Լազարյան, Ներսիսյան, Գևորգյան ճեմարան, Արմաշի դպրեվանք, թեմական դպրոցներ. կանանց կրթութան հիմախնդիրը և այլն)
- Մխիթարյան միաբանության գործունեությունը (Հայկազյան բառարանը, Մ. Չամչյանի «Հայոց պատմություն» աշխատությունը, Ղ. Ինճիճյանի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհ» աշխատությունը, Ղ. Ալիշան, «Հայբուսակ»)
- Գիտության զարգացումը (բնական և հասարակական գիտություններ):
- Գրականությունը: Արվեստը:
- Գաղթավայրերի դերը հայապահպանության և ազգային մշակույթի զարգացման ու պահպանման գործում նոր շրջանում
- Մշակույթի հիմնական ձեռքբերումները և նշանավոր մշակութային գործիչները

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	Ընդհանրական խաչվող հասկացություններ
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն	• **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները,

• հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) • աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում • ուրվագծային քարտեզների հետ աշխատանք • ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք • սահիկաշարերի պատրաստում • պաստառների ձևավորում • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում • թեստային աշխատանքերի կատարում • երևակայական ճանապարհորդություն • ֆիլմերի դիտում և քննարկում • էքսկուրսիոն դասեր տվյալ ժամանակաշրջանի որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում • խաղեր մրցույթներ, վիկտորիաներ • հանդեսներ, միջոցառումներ • բանավեճեր, քննարկումներ • ինքնաշեն նյութերի ստեղծում • նկարի վերլուծություն • խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում • ռեֆերատ	ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: • **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: • **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: • **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: • **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային “Արժեքներ»ը պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
Միջառարկայական կապերը թեմայում	

Համաշխարհային պատմություն – տվյալ ժամանակաշրջանի քաղաքական և մշակութային գործիչներ, ովքեր առնչվել են այս ժամանակաշրջանի մշակութի հայ գործիչների հետ **Աշխարհագրություն**- երկրներ, որտեղ հաստատվել են հայկական գաղթավայրեր, այնտեղ բնակվող բնակչությունն այսօր **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», »Մարդ ճաշակ-մշակույթ», «Մարդ-բարոյականություն-արժեքր», «Մարդ-իրավունք», «Մարդ-տնտեսություն», “Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» թեմաներ **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Գրականություն** –գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ, թատրոն)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 10 Հ 16, Հ 17, Հ 19, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Պահուստային - 5 ժամ

Հայոց պատմություն 9-րդ դասարան
85 ժամ

Ներածություն - 1 ժամ

14. Հայ ժողովուրդը XIX դարի վերջին XX դարի սկզբին։ Հայերի ցեղասպանությունը (16 ժամ)
15. Հայկական պետության վերականգնումը: Հայաստանի առաջին Հանրապետությունը (12 ժամ)
16. Խորհրդային Հայաստանը 1920-1991 թթ. (23 ժամ)
17. Հայկական պետության արդի փուլը (12 ժամ)
18. Հայկական սփյուռքը ձևավորումից մինչ այսօր (9 ժամ)
19. Հայացք ապագային. Հայության հարատևման գրավականները (5 ժամ)

Նախաքննական կրկնություն - 7 ժամ

Ներածություն -1 ժամ

Թեմա 14
Հայ ժողովուրդը XIX դարի վերջին XX դարի սկզբին: Հայերի ցեղասպանությունը (16 ժամ)
Նպատակ
● Ձեռք բերել գիտելիքներ Հայոց ցեղասպանության (շարժառիթներ, պատճառներ, ծրագրեր փուլեր, հետևանքներ, պատմական դասեր, ճանաչման գործընթաց, ինքնապաշտպանական մարտեր) վերաբերյալ, ըմբռնել, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը Հայաստանի Հանրապետության, ողջ հայության համար ազգային անվտանգության հիմնախնդիր է: ● Հաղթահարել զոհ լինելու բարդույթները, ձևավորել պատմական արդարության վերականգնման, կորսված հայրենիքի պահանջատեր լինելու, հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում անվտանգ ապրելու և զարգանալու իրավունքի համար պայքարի գիտակցություն, ձևավորել մերժողական վերաբերմունք մարդու կամ որևէ ժողովրդի նկատմամբ կիրառվող բռնությունների հանդեպ՝ կանխելու այսօր էլ շարունակվող բռնությունները: ● Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի յուրացման, կորուստներից դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: ● Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:
Վերջնարդյունք
1. Նկարագրի տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական իրադրությունը. Հայաստանի իրավիճակը XIX դարի վերջին XX դարի սկզբին, բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների, միջպետական տարբեր միությունների, կազմակերպությունների հետ, գտնի արդի աշխարհի հետ բազմատեսակ կապերը առաջարկի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխա-տեսի դրանց հետևանքները: 2. Ներկայացնի և համեմատի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքները, հետևանքները, պատճառահետևան-քային կապերը, հիմնավորի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածությունը, կապեր գտնի և հսմադրի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ: 3. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները: 4. Ներկայացնի 1894-1896 թթ. և 1915-1916 թթ ինքնապաշտպանական մարտերը, համեմատի

և վերլուծի դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները, արդյունքներն ու հետևանքները, արժևորի միասնական և փոխհամաձայնեցված գործելու արդյունքները, ցույց տա ազգային, հասարակական, հոգևոր և անձնական շահերի միասնականության կարևորությունը դրված նպատակների իրականացման գործում։

5. Ներկայացնի և վերլուծի 1890 ական թթ. հայերի կոտորածները, դրանց նկատմամբ մեծ տերությունների անտարբերության պատճառներն ու հետևանքները, երիտթուրքական ծրագրերը և հայերի բնաջնջման գործողությունները, Հայոց Մեծ եղեռնի ընթացքն ու հետևանքները։
6. Արտահայտի սեփական տեսակետներ և դիրքորոշումներ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի, պահանջատիրության, ցեղասպանության հետևանքների հաղթահար-ման ուղիների, և հիմնախնդրի զարգացման հեռանկարների և արդյունքների վերաբերյալ, փորձի առաջարկել հիմնախնդրի լուծման տարբերակներ։
7. Գնահատի Հայոց եղեռնի վերաբերյալ մեծ տերությունների, առաջադեմ գործիչների և կազմակերպությունների արձագանքները, հայերին փրկելու անհատ միսիոներների և Հայոց եկեղեցու գործողությունները, կարծիք հայտնի Հայոց ցեղասպանության պատասխանատուների դատավարության, Նեմեսիս գործողության, Հայկական հարցի «լուծման» ռուսական ուղիների, ռուս-թուրքական մերձեցման վերաբերյալ։
8. Ցույց տա Հայոց ցեղասպանության անպատժելիության և XX դարի ցեղասպանությունների կապը, դատապարտի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագոր-ծություն. արժևորի և հիմնավորի պատմական փորձի յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը։
9. Նկարագրի և բացատրի սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական միջավայրի, համակեցութային հարաբերությունների առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները Արևելյան Հայաստանում, Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ շրջաններում XIX դարի վերջին, XX դարի սկզբին, կապեր գտնի տվյալ և արդի շրջանի առօրյա կյանքի, կենցաղի և համակեցութային հարաբերությունների։ միջև։
10. Կապեր գտնի պատմական և արդի գործընթացներում, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի և հիմնավորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը։
11. Պարզաբանի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները, ճիշտ և տեղին օգտագործի դրանք։
12. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, առաջադրի խնդիրներ և ներկայացնի լուծումներ։
13. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, որոշի, բնութագրի աղբյուրի արժանահավատությունը, արտահայտի և հիմնավորի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ։

Թեմայի բովանդակություն	
● Հայոց ցեղասպանության սկիզբը: Հայության բնաջնջման համիդյան ծրագիրը: Արևմտահայության կոտորածները 1894-1896 թթ. ● 1894-1896 թթ. ինքնապաշտպանական մարտերը ● Երիտթուրքական հեղաշրջումը: Հայկական ազատագրական շարժման նոր մարտավարությունը, քաղաքական կուսակցությունների դիրքորոշումը ● Երիտթուրքերը համիդյան ծրագրի շարունակողներ: Կիլիկիահայության օրհասը: Օսմանիզմ, պանիսլամիզմն պանթյուրքիզմ. Մեծ Թուրանի տեսլականը ● Հայոց Մեծ եղեռնը: Իրագործման փուլերը ● Ընդդիմացում հայաջինջ քաղաքականությանը. 1915-1916 թթ.ինքնապաշտպանական մարտերը ● Մեծ տերությունների, առաջադեմ գործիչների և կազմակերպությունների արձագանքը ● Հայոց ցեղասպանության պատասխանատուների դատավարությունը: Նեմեսիս գործողությունը ● Ցեղասպանության հետևանքները (Արևմտյան Հայաստանի հայաթափում, հայրենազրկում, մարդկային, նյութական, ֆինանսական կորուստներ, պատմամշակութային ժառանգության կորուստ, բարոյահոգեբանական հետևանքներ, Սփյուռքի ձևավորում) ● Հայոց Մեծ եղեռնը և Հայոց եկեղեցին ● Ռուսական հեղափոխություններն ու Հայաստանը ● Ցեղասպանության իրականացման վերջին փուլը: Կիլիկիահայության աղետը ● Զոհից վերապրող, վերազարթոնք. անհատական ճակատագրեր ● Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: Պահանջատիրություն ● Ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: XX դարի ցեղասպանությունները	
Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	**Ընդհանրական խաչվող հասկացություններ**
● ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում ● սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն ● զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն ● հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) ● աղյուսակների, գծակարգերի,	● **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: ● **Համաշխարհայնացում**

գծապատկերների կազմում ● ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք ● սահիկաշարերի պատրաստում ● պաստառների ձևավորում ● նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում ● նպատակային զրույցների ու հարցազրույցների վարում անհատների և տարբեր խմբերի հետ ● թեստային աշխատանքերի կատարում ● երևակայական ճանապարհորդություն ● ֆիլմերի դիտում և քննարկում ● էքսկուրսիոն դասեր որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում ● խաղեր, մրցույթներ, վիկտորիաներ ● բանավեճեր, քննարկումներ ● դեպքի ուսումնասիրություն ● նկարի վերլուծություն ● խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում ● ռեֆերատ	**(գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: ● **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: ● **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:

Միջառարկայական կապերը թեմայում

Համաշխարհային պատմություն – XIX դարի վերջի XX դարի սկզբի միջպետական կառույցներ, աշխարհի երկրներ, կոնֆլիկտներ,հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, ձեռքբերումներ և այլն

Աշխարհագրություն- աշխարհի երկրներ՝ տարածք, բնակչություն. բնակլիմայական պայմաններ, բնական հարստություններ և այլն, քարտեզների հետ աշխատանք

Հասարակագիտություն - «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» թեմաներ

Հայոց լեզու – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում

Գրականություն – գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ

ՆԶՊ- զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն,

Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ) - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները - Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 15
Հայկական պետության վերականգնումը: Հայաստանի առաջին Հանրապետությունը (12 ժամ)
Նպատակ
• Ձեռք բերել գիտելիքներ տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական իրադրության, XX դարասկզբին հայկական քաղաքակրթական զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, ակնառու գործիչների վերաբերյալ, համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծել դրանց արդյունքներն ու հետևանքները, գնահատել Հայաստանի առաջին Հանրապետության ձեռքբերումներն ու բացթողումները աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում և տեղն ու դերը հայոց պատմության մեջ: • Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: • Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:
Վերջնարդյունք
1. Նկարագրի աշխարհաքաղաքական իրադրությունը, Հայաստանի և տարածաշրջանի ներքաղաքական և արտաքին քաղաքական իրավիճակը 1918-1920 թթ., բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների, միջպետական տարբեր միությունների, կազմակերպությունների հետ, առաջարկի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսի դրանց հետևանքները: 2. Ներկայացնի և բացատրի անկախության ու պետության վերականգնման նախադրյալները,

պետականաշինության գործընթացը, առանձնահատկությունները, երկրի առջև ծառացած մարտահրավերները, Հանրապետության անկման պատճառները, արժևորի անկախ, ինքնիշխան ազգային պետություն ունենալու անհրաժեշտությունը, գնահատի Հայաստանի առաջին Հանրապետության տեղն ու դերը հայոց պատմության մեջ:

3. Ներկայացնի և համեմատի 1918-1920 թթ պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, բանակցությունները, խորհրդաժողովները, համագումար-ները, համաձայնագրերը, պայմանագրերը վերլուծի դրանց արդյունքները, հետևանքները, պատ-ճառահետևանքային կապերը, հիմնավորի հայոց և համաշխարհային պատմական իրադարձու-թյունների փոխկապակցվածությունը, կապեր գտնի և հսմադրի արդի պատմական գործընթացնե-րում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ:
4. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:
5. Ըմբռնի Մայիսյան հերոսամարտերի էությունը, համեմատի հերոսամարտերը, արժևորի միասնա-կան և փոխհամաձայնեցված գործելու արդյունքները, ցույց տա ազգային, հասարակական, հոգևոր և անձնական շահերի միասնականության կարևորությունը դրված նպատակների իրականացման գործում, հիմնավորի ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
6. Վերլուծի պետության և հայոց եկեղեցու՝ որպես ազգային-հոգևոր կառույցի, համագործակցությունն ու նշանակությունը Հայաստանի առաջին Հանրապետության զարգացման գործում:
7. Նկարագրի և բացատրի պետական կառավարման համակարգի, սոցիալ-տնտեսական վիճակի. հասարակական միջավայրի, համակեցութային հարաբերությունների առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները. Հայաստանի առաջին Հանրապետությունում, վերլուծի կառավարման համակարգի, հասարակական և սոցիալ-տնտեսական միջավայրերի փոփոխու-թյունը Հայաստանում, կապեր գտնի ներկա կյանքի համապատասխան ոլորտների հետ:
8. Բացատրի Հայաստանի առաջին Հանրապետությունում մշակույթի զարգացման պայմանները, արժևորի ազգային մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, համեմատի արդի մշակութային ձեռքբերումների հետ, գիտակցի ազգային արժեքները պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
9. Կապեր գտնի պատմական և արդի գործընթացներում, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի և հիմնավորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:
10. Պարզաբանի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները, ճիշտ և տեղին օգտագործի դրանք:
11. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ

հետազոտական աշխատանք, առաջադրի խնդիրներ և ներկայացնի լուծումներ։

12. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, որոշի, բնութագրի աղբյուրի արժանահավատությունը, արտահայտի և հիմնավորի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ։

Թեմայի բովանդակություն

- Աշխարհաքաղաքական իրադրությունը։ Ներքաղաքական ու արտաքին քաղաքական իրավիճակը Հայաստանում և տարածաշրջանում
- Խորհրդային Ռուսաստանը և Հայկական հարցը։ Բրեստ-Լիտովսկի հաշտությունը։ Հայկական հողերի բռնակցումը Թուրքիային։
- Անկախության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները և գործընթացը։ Թուրքական զորքերի ներխուժումն Անդրկովկաս և Հայաստան։ Տրապիզոնի բանակցությունները
- Մայիսյան հերոսամարտերը։ Հայաստանի Հանրապետություն հռչակումը։ Բաթումի պայմանագիրը
- Հայաստանի Հանրապետության կայացումը և ներքին քաղաքականությունը։ Պետական, քաղաքական, ռազմական, հասարակական, ժողովրդագրական, կառույցները, խորհրդանիշները, սոցիալ-տնտեսական իրավիճակը և առօրյա կյանքը
- Հայաստանի Հանրապետությանը սպառնացող մարտահրավերները և դրանց հետևանքները։ (Թուրք-թաթարական խռովություններ, Մայիսյան ապստամբություն)
- Հայոց եկեղեցու գործունեությունը 1918-1920 թթ.։ Եկեղեցի-պետություն դաշնագիրը
- Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը և միջազգային հարաբերությունները 1918-1920 թթ.։ Հայ-վրացական և հայ-ադրբեջանական տարածքային խնդիրները
- Հարաբերությունները Քառյակ միության, Ռուսաստանի, ԱՄՆի հետ։ Փարիզի խորհրդաժողովը և հայկական հարցը։ Սևրի պայմանագիրը
- Հայաստանի Հանրապետության անկումը. պատճառները (թուրք-հայկական պատերազմը, Ալեքսանդրապոլի և Երևանի համաձայնագրերը) և դասերը
- Հայաստանի Առաջին Հանրապետության մշակութային ձեռքբերումները

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	**Ընդհանրական խաչվող հասկացություններ**
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • զանգվածային	• **Համակարգ (Պետություն)** Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ։ • **Կառուցվածք և գործառույթ** Պետական կառավարման կառուցվածքը և

լրատվամիջոցներից, համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն ● հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) ● աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում ● ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք ● սահիկաշարերի պատրաստում ● պաստառների ձևավորում ● նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում ● նպատակային զրույցների ու հարցազրույցների վարում անհատների և տարբեր խմբերի հետ ● թեստային աշխատանքերի կատարում ● երևակայական ճանապարհորդություն ● ֆիլմերի դիտում և քննարկում ● էքսկուրսիոն դասեր որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում ● խաղեր, մրցույթներ, վիկտորիաներ ● բանավեճեր, քննարկումներ ● դեպքի ուսումնասիրություն ● նկարի վերլուծություն ● խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում ● ռեֆերատ	պաշտոնյաների գործառույթները ● **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: ● **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: ● **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: ● **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: ● **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը
Միջառարկայական կապերը թեմայում	

Համաշխարհային պատմություն –XX դարի սկզբի միջպետական կառույցներ, աշխարհի երկրներ, կոնֆլիկտներ, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, ձեռքբերումներ և այլն **Աշխարհագրություն** - աշխարհի երկրներ՝ տարածք, բնակչություն. բնակլիմայական պայմաններ, բնական հարստություններ և այլն, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ», «Պետություն», «Պետություն և մշակույթ», «Պետություն և տնտեսություն», »Պետություն և քաղաքականություն» թեմաներ **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Գրականություն** – գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ **ՆԶՊ**- զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն, **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները - Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Թեմա 16
Խորհրդային Հայաստանը 1920-1991 թթ. (23 ժամ)
Նպատակ
• Ձեռք բերել գիտելիքներ տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական իրադրության, խորհրդային շրջանում հայկական քաղաքակրթական զարգացման ընթացքի և առանձնահատ-կությունների, ակնառու գործիչների վերաբերյալ, համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծել դրանց արդյունքներն ու հետևանքները, գնահատել Խորհրդային Հայաստանի ձեռքբերումներն ու բացթողումները և տեղն ու դերը հայոց պատմության մեջ: • Ըմբռնել և արժևորել խորհրդային ժամանակաշրջանի ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: • Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և

աշխատելու հմտություններ և կարողություններ:
Վերջնարդյունք
1. Նկարագրի աշխարհաքաղաքական իրադրությունը, ԽՍՀՄ-ի ու ՀԽՍՀ արտաքին քաղաքական և ներքաղաքական իրավիճակը, բացատրի հարաբերությունները խորհրդային հանրապետություն-ների, աշխարհի երկրների, միջպետական տարբեր միությունների և կազմակերպությունների հետ, գտնի արդի աշխարհի հետ բազմատեսակ կապերը, առաջարկի պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսի դրանց հետևանքները: 2. Ներկայացնի և բացատրի ԽՍՀՄ կազմավորման, Հայաստանի խորհրդայնացման նախադրյալները, Հայաստանում սոցիալիստական հասարակության զարգացման պետական, հասարակական, վարչաքաղաքական, տնտեսական մոդելները, տարբեր շրջափուլերում դրանց առանձնահատկությունները, հետևանքները, Հայաստանի անկախացման, ԽՍՀՄ փլուզման պատճառները, ՀԽՍՀ տեղն ու դերը հայոց պատմության մեջ: 3. Ներկայացնի և համեմատի 1921-1991 թթ. պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքները, հետևանքները, պատճառահետևանքային կապերը, հիմնավորի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածությունը, կապեր գտնի և հսմադրի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ: 4. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները: 5. Ներկայացնի և բացատրի Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախդիրները, Արցախի, Նախիջևանի, Ջավախքի տարածքները հարևան պետություններին զիջելու Ռուսաստանի բոլշևի-կյան կառավարության քաղաքականությանը, ըմբռնի Զանգեզուրի ազատամարտի էությունը, գնահատի Գարեգին Նժդեհի և այդ պայքարի տեղն ու դերը Հայոց պատմության մեջ: 6. Ներկայացնի և համեմատի Մոսկվայի և Կարսի հակահայ պայմանագրերը, Լոնդոնի ու Լոզանի խորհրդաժողովները, դասեր քաղի, կարծիք հայտնի կորուստների և հետևանքների վերաբերյալ: 7. Գնահատի Երևանի վերակառուցման, համահայկական քաղաքակրթական կենտրոնի վերածման. և համասփյուռ հայ մտավորականության վերադարձի տեղն ու դերը հայոց պատմության մեջ: 8. Բացատրի անհատի պաշտամունքի էությունը, զանգվածային բռնաճնշումները, Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ կիրառվող քաղաքականությունը և դրանց ծանր հետևանքները: 9. Բացահայտի ֆաշիզմի դեմ պայքարում հայ ժողովրդի և Հայ առաքելական եկեղեցու մասնակցությունն ու ներդրումների հիմնական ուղղությունները արժևորի հայ ժողովրդի

մասնակցության դերը պատերազմում:

10. Բացատրի վերակառուցման քաղաքականության նպատակները, ձախողման պատճառները, քննարկի Արցախյան շարժման սկզբնավորման, խորհրդային և ադրբեջանական իշխանությունների դիրքորոշման, համազգային շարժման ծավալման, Սումգայիթի, Բաքվի հայերի կոտորածների, հայ բնակչության տեղահանության, զինված պայքարի վերածվելու պատճառները և հետևանքները, կարծիք հայտնի շարժման ձեռքբերումների ու բացթողումների վերաբերյալ:
11. Նկարագրի և վերլուծի նորանկախ պետությունների ստեղծման և ամրապնդման գործընթացը Հայաստանում և Արցախում, Հայոց եկեղեցու հետ փոխհարաբերությունները, արժևորի Անկախության հռչակագրի և Անկախության հանրաքվեի պատմական նշանակությունը:
13. Բացատրի Խորհրդային Հայաստանում մշակույթի զարգացման պայմանները, արժևորի ազգային մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, համեմատի արդի մշակութային ձեռքբերումների հետ, գիտակցի ազգային արժեքները պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
12. Նկարագրի և բացատրի պետական կառավարման համակարգի, սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական միջավայրի, համակեցութային հարաբերությունների, առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները. վերլուծի հասարակական, սոցիալ-տնտեսական միջավայրերի փոփոխությունը Խորհրդային Հայաստանում՝ տարբեր շրջափուլերում, կապեր գտնի ներկա կյանքի համապատասխան ոլորտների հետ:
13. Կապեր գտնի տվյալ ժամանակաշրջանի և արդի գործընթացներում, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի և հիմնավորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:
14. Պարզաբանի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները, ճիշտ և տեղին օգտագործի դրանք:
15. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, առաջադրի խնդիրներ և ներկայացնի լուծումներ:
16. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, որոշի, բնութագրի աղբյուրի արժանահավատությունը, արտահայտի և հիմնավորի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

Թեմայի բովանդակություն

3.1.Հայաստանի խորհրդայնացումը

- Խորհրդային վարչակարգի հաստատումը Հայաստանում. (կառավարության նոր մարմինների ձևավորումը և գործունեությունը, «Ռազմական կոմունիզմի»

քաղաքականությունը)
- Համաժողովրդական ապստամբություն նոր վարչակարգի դեմ
- Երևանի վերակառուցումը: Երևանը որպես համահայկական քաղաքակրթական կենտրոն: Քաղաքային հասարակության և մշակույթի ստեղծումը: (Ալեքսանդր Մյասնիկյան դերը)
- Մտավորականության վերադարձը Հայաստան (Սարյան, Ալեքսանդր Թամանյան և այլոք)

3.2. Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները

- Զանգեզուրի հերոսամարտը: Գարեգին Նժդեհ
- Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1920-1921 թթ.
- «Լոռու չեզոք գոտու» և Ջավախքի հիմնախնդիրը
- 1921 թ, մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի, Կարսի պայմանագրերը: Հայկական հարցը Լոնդոնի (1921), Լոզանի (1921-1922) խորհրդաժողովներում: Կորուստներ և հետևանքներ

3.3. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) կազմավորումը

- ԽՍՀՄ կազմավորումը. Գործընթացը, գաղափարական հիմքը, պետական, հասարակական, վարչաքաղաքական կառույցը, սահմանադրությունները, քարոզչությունը, ԽՍՀՄ-ը որպես ամբողջատիրական պետություն
- Սոցիալիստական հասարակության զարգացման տնտեսական մոդելները. ՆԷՊ, կոլեկտիվացում, ինդուստրացում
- Սոցիալիստական հասարակության ստալինյան մոդելը. սոցիալիզմ առանձին երկրի սահմաններում, անհատի պաշտամունքը և քաղաքական բռնությունները, զանգվածային բռնաճնշումները
- Խորհրդային իշխանության քաղաքականությունը եկեղեցու նկատմամբ: Հայոց եկեղեցու գործունեության կասեցումը
- Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին
- Սոցիալիստական հասարակության զարգացման ծրագրերը. «խրյուշչովյան ձնհալը», «բրեժնևյան լճացումը», Գորբաչովյան «վերակառուցման քաղաքականությունը»
- Սոցիալիստական հասարակության զարգացման կրթամշակութային ծրագրերը: Խորհրդահայ մշակույթը 1920-1991 թթ. (Սոցիալիստական հասարակության զարգացումը. կրթությունը, գիտությունը, մշակույթը, հետպատերազմյան վերականգնումը. կրթական, մշակութային, գիտատեխնիկական առաջընթացը)
- Խորհրդահայ հասարակության առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները

3.4. Խորհրդային անցյալից անկախացում

- Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ) 1921-1988 թթ.
- Ազգային հարցի սրումը: Արցախյան հիմնահարցը և շարժման սկիզբը: (Խորհրդային Հայաստանին միանալու ԼՂԻՄ որոշումը, դրա իրավական հիմնավորումները և արձագանքները Հայաստանում, ԽՍՀՄ-ում և աշխարհում: Սումգայիթյան ցեղասպանությունը. հայության բռնագաղթը)

• Համազգային շարժման ծավալումը։ 1988 թ. երկրաշարժը (Հայաստանի Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի ազգային խորհրդի 1989 թ դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը։ Բաքվի կոտորածները։ Խորհրդային բանակի և Ադրբեջանի գործողությունները ԼՂԻՄ-ում) • ՀՀ և ԼՂՀ անկախացման գործընթացը (ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1990 թ. այլընտրանքային ընտրությունները. Նոր գերագույն խորհուրդը։ Հայաստանի անկախության հռչակագիրը։ Անկախության հանրաքվեն, ԼՂՀ անկախության հռչակումը և անկախութան հանրաքվեն, ԽՍՀՄ փլուզումը, ԱՊՀ ստեղծումը։ • Հայոց Եկեղեցին նորանկախ պետության ստեղծման և ամրապնդման տարիներին	
Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	**Ընդհանրական խաչվող հասկացություններ**
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն • հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) • աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում • ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք • սահիկաշարերի պատրաստում • պաստառների ձևավորում • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում • նպատակային զրույցների ու հարցազրույցների վարում	• **Համակարգ (Պետություն)** Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ: • **Կառուցվածք և գործառույթ** Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները • **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: • **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: • **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: • **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային

անհատների և տարբեր խմբերի հետ ● թեստային աշխատանքերի կատարում ● երևակայական ճանապարհորդություն ● ֆիլմերի դիտում և քննարկում ● էքսկուրսիոն դասեր որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում ● խաղեր, մրցույթներ, վիկտորիաներ ● բանավեճեր, քննարկումներ ● դեպքի ուսումնասիրություն ● նկարի վերլուծություն ● խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում ● ռեֆերատ	իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: ● **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը ● **Գիտատեխնիկական նորարարություն** Դիտարկել գիտական և տեխնոլոգիական նվաճումների ու քաղաքակրթական ձեռբերումների ազդեցությունը կյանքի, հասարարական զարգացման և առաջընթացի վրա:

Միջառարկայական կապերը թեմայում

Համաշխարհային պատմություն – XX դարի միջպետական կառույցներ, աշխարհի երկրներ, կոնֆլիկտներ,հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, ձեռքբերումներ և այլն

Աշխարհագրություն- աշխարհի երկրներ՝ տարածք, բնակչություն. բնակլիմայական պայմաններ, բնական հարստություններ և այլն, քարտեզների հետ աշխատանք

Հասարակագիտություն - «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ», «Պետություն», «Պետություն և մշակույթ», «Պետություն և տնտեսություն», «Պետություն և քաղաքականություն» թեմաներ

Հայոց լեզու – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում

Գրականություն – գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ

ՆԶՊ- զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն,

Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ) -մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր

Բնագիտամաթեմատիկական առարաներ –հայտնագործություններ, նորարարություններ, ձեռքբերումներ

Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 10, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45,Հ 46

Թեմա 17
Հայկական պետության արդի փուլը (12 ժամ)
Նպատակ
● Ձեռք բերել գիտելիքներ տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական իրադրության հայկական քաղաքակրթական զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, ակնառու գործիչների վերաբերյալ, համեմատել պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծել դրանց արդյունքներն ու հետևանքները, ցույց տալ Հայոց երկու պետությունների տեղն ու դերը աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում, գնահատել ձեռքբերումներն ու բացթողումները: ● Ըմբռնել Արցախյան ազատամարտի էությունը, արժևորել Արցախի ազատագրումը որպես հայոց նորագույն պատմության կարևոր ձեռքբերում,պատկերացումներ ձեռք բերել Արցախի հիմնախնդրի արդի վիճակի վերաբերյալ: ● Ըմբռնել և արժևորել ներկայիս Հայաստանի ու հայոց պատմության նախորդ շրջանների միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: ● Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:
Վերջնարդյունք
1. Նկարագրի տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական իրադրությունը. Հայաստանի արտաքին քաղաքական և ներքաղաքական իրավիճակը արդի շրջանում, բացատրի հարաբերու-թյունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների, միջպետական տարբեր միությունների, կազմակերպությունների հետ, գտնի արդի աշխարհի հետ բազմատեսակ կապեր, առաջարկի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսի դրանց հետևանքները: 2. Ներկայացնի և բացատրի անկախացման և պետականաշինության գործընթացները Հայաստանի և Արցախի Հանրապետություններում, ներքին և արտաքին մարտահրավերները, արտահայտի տեսակետներ հայոց երկու Հանրապետությունների և

աշխարհում դրանց տեղի ու դերի վերա-բերյալ, եզրահանգումներ անի ՀՀ և ԱՀ ներքաղաքական և միջազգային աշխարհաքաղաքական զարգացումների հեռանկարների վերաբերյալ:

3. Ներկայացնի և համեմատի արդի շրջանի պատմական ու հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքները, հետևանքները, պատճառահե-տևանքային կապերը, հիմնավորի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածությունը, կապեր գտնի և հսմադրի հայոց և համաշխարհային արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձություններ և երևույթներ:
4. Ճանաչի արդի ժամանակաշրջանի ակնառու գործիչների բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները:
5. Ըմբռնի Արցախյան ազատամարտի էությունը, ներկայացնի կարևոր դրվագներն ու ձեռք-բեերումները. արժևորի միասնական և փոխհամաձայնեցված գործելու արդյունքները, հիմնավորի ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
6. Գնահատի Արցախի ազատագրման նշանակությունը, քննարկի «Արցախյան հիմնահարցի» արդի վիճակը, Արցախի հիմնախնդրի լուծման վերաբերյալ առաջարկի հնարավոր տարբերակներ, կանխատեսի հետևանքները:
7. Վերլուծի պետության և հայոց եկեղեցու՝ որպես ազգային-հոգևոր կառույցի, համագործակցության անհրաժեշտությունն ու նշանակությունը նորագույն շրջանում Հայաստանի և Արցախի Հանրապետությունների զարգացման ու զորեղացման գործում
8. Նկարագրի և բացատրի պետական կառավարման համակարգի, սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական միջավայրի, համակեցութային հարաբերությունների, առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները արդի շրջանում Հայոց երկու պետություններում, վերլուծի դրանց փոփոխությունները խորհրդային շրջանի համեմատությամբ:
9. Բացատրի ազգային մշակույթի զարգացման պայմանները, արժևորի արդի մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, համեմատի տարբեր շրջանների մշակութային ձեռքբերումների հետ, գիտակցի ազգային արժեքները պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
10. Կապեր գտնի արդի և պատմական գործընթացներում, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի և հիմնավորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:
11. Պարզաբանի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները, ճիշտ և տեղին օգտագործի դրանք:
12. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, առաջադրի խնդիրներ և ներկայացնի լուծումներ:

13. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, որոշի, բնութագրի աղբյուրի արժանահավատությունը, արտահայտի և հիմնավորի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ։

Թեմայի բովանդակություն

Արցախյան ազատամարտը

- Ազատագրական պայքարի զինված փուլը (1991-1994 թթ)։ Զինադադարի կնքումը (Ադրբեջանի ագրեսիան։ Հայկական զորքերի հակահարձակումը։ Գետաշենի և Մարտունաշենի հերոսական ինքնապաշտպանությունը։ Շուշիի ազատագրումը։ Պատերազմի հետագա ընթացքը։ Հաղթանակներ)
- Պատերազմն այսօր. Քաղաքական խնդրից մինչև անհատական ճակատագիր։ Արցախյան ազատամարտի հերոսներ
- Արցախյան հիմնախնդրի միջազգայնացումը, հիմնախնդրի արդի վիճակը

Հայոց պետության կայացման գործընթացը

- Հայաստանի Հանրապետության կայացման գործընթացը (ՀՀ իշխանության մարմինների ձևավորումը, բանակի ստեղծումը, խորհրդանիշները, սահմանադրությունը)
- Արցախի Հանրապետության կայացման գործընթացը (ԼՂՀ իշխանության մարմինների ձևավորումը, բանակի ստեղծումը, խորհրդանիշները)
- Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը
- Արցախի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը
- Հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր կյանքը Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում
- Հայկական մշակույթը արդի շրջանում
- Արդի հայ հասարակության առօրյա կյանքն ու կենցաղը, համակեցութային հարաբերությունները։

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	Ընդհանրական խաչվող հասկացություններ
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված տեղեկատվության	• **Համակարգ (Պետություն)** Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ։ • **Կառուցվածք և գործառույթ** Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները • **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները,

վերլուծություն ● հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) ● աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում ● ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք ● սահիկաշարերի պատրաստում ● պաստառների ձևավորում ● նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում ● նպատակային զրույցների ու հարցազրույցների վարում անհատների և տարբեր խմբերի հետ ● թեստային աշխատանքերի կատարում ● երևակայական ճանապարհորդություն ● ֆիլմերի դիտում և քննարկում ● էքսկուրսիոն դասեր որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում ● խաղեր, մրցույթներ, վիկտորիաներ ● բանավեճեր, քննարկումներ ● դեպքի ուսումնասիրություն ● նկարի վերլուծություն ● խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում ● ռեֆերատ	ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: ● **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: ● **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: ● **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: ● **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը ● **Գիտատեխնիկական նորարարություն** Դիտարկել գիտական և տեխնոլոգիական նվաճումների ու քաղաքակրթական ձեռբերումների ազդեցությունը կյանքի, հասարարական զարգացման և առաջընթացի վրա:
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն – XX դարի և XIX դարի սկզբի միջպետական կառույցներ,	

աշխարհի երկրներ, կոնֆլիկտներ,հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, ձեռքբերումներ և այլն **Աշխարհագրություն**- աշխարհի երկրներ՝ տարածք, բնակչություն. բնակլիմայական պայմաններ, բնական հարստություններ և այլն, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ», «Պետություն», «Պետություն և մշակույթ», «Պետություն և տնտեսություն, «Պետություն և քաղաքականություն» թեմաներ **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Գրականություն** – գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ **ՆԶՊ**- զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն, **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր **Բնագիտամաթեմատիկական առարաներ** – հայտնագործություններ, նորարարություններ, ձեռքբերումներ
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները - Հ 1, Հ 2, Հ 10, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 23, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45,Հ 46

Թեմա 18
Հայկական սփյուռքը ձևավորումից մինչ այսօր (9 ժամ)
Նպատակ
• Ձեռք բերել գիտելիքներ հայկական սփյուռքի ձևավորման և զարգացման ընթացքի, տարբեր ժամանաներում հայրենիք - սփյուռք կապերի, հարաբերությունների, առանձնահատկությունների, ակնառու պատմական գործիչների վերաբերյալ, արժևորել ազգային հիմնախնդիրների լուծման ուղղությամբ Սփյուռքի գործունեությունը, ընբռնել և գնահատել Սփյուռքի դերև ու նրա հետ համագործակցության, ներուժը ճիշտ օգտագործելու կարևորությունը: • Ըմբռնել և արժևորել Սփյուռքի պատմության ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: • Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն,

հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:
Վերջնարդյունք
1. Նկարագրի և բացատրի սփյուռքի առաջացման պատճառները, պատմական պայմանները, ընթացքը, սփյուռքահայերի առջև ծառացած խնդիրները, սփյուռքահայ խոշոր կենտրոնները, դրանց առանձնահատկությունները, 1990 ական թթ. զանգվածային արտագաղթի հետևանքով նոր ձևավորված համայնքները, արժևորի Հայոց եկեղեցու դերը սփյուռքահայության կյանքում, հայապահպան գործունեությունը: 2. Ներկայացնի և համեմատի սփյուռքի պատմության պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքները, հետևանքները, պատճառահետևանքային կապերը, հիմնավորի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածությունը, կապեր գտնի և հսմադրի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձություններ և երևույթներ: 3. Ճանաչի ակնառու գործիչների բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները: 4. Ներկայացնի հայրենադարձության փուլերը, դրանց ժամանակագրական շրջանակները, բացատրի հայրենադարձության դադարեցման, հետագայում կրկին շարունակվելու պատճառները, գնահատի հայրենադարձության նշանակությունը Խորհրդային Հայաստանի սոցիալ- տնտեսական և հասարակական –քաղաքական, մշակութային կյանքում: 5. Փաստարկի և գնահատի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման նպատակով սփյուռքի տարբեր կառույցների և գործիչների կողմից իրականացված քայլերը, դրանց արդյունքները, հաջողություններն ու բացթողումները, դասեր քաղի, բացատրի ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: 6. Բնութագրի հայրենիք - սփյուռք կապերը և հարաբերությունները XX դարում և այսօր, գնահատի դրանց ազդեցությունը հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի վրա, համեմատի և արժևորի ֆաշիզմի դեմ մղվող պայքարում և Արցախյան ազատամարտին սփյուռքահայերի մասնակցությունը: 7. Բացատրի սփյուռքահայ մշակույթի զարգացման պայմանները, արժևորի սփյուռքահայ մշակույթի հոգևոր և նյութական ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, համեմատի հայոց տարբեր շրջանների մշակութային ձեռքբերումների հետ, գիտակցի ազգային արժեքները պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: 8. Նկարագրի և բացատրի հասարակական միջավայրի, համակեցութային հարաբերությունների, առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները սփյուռքի տարբեր կենտրոններում, բացատրի դրանց նմանություններն ու տարբերությունները, կապեր գտնի իր կյանքի հետ:

9. Կապեր գտնի արդի և պատմական գործընթացներում, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի և հիմնավորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:
10. Պարզաբանի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները, ճիշտ և տեղին օգտագործի դրանք:
11. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, առաջադրի խնդիրներ և ներկայացնի լուծումներ:
12. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, որոշի, բնութագրի աղբյուրի արժանահավատությունը, արտահայտի և հիմնավորի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

Թեմայի բովանդակություն

- Հայկական սփյուռքի ձևավորումը, պայմանները, մարտահրավերները, խոշոր կենտրոնները «Ազգային օջախի» և հայ գաղթականության խնդիրը Ազգերի լիգայում: Ֆ. Նանսեն
- Սփյուռքահայերի հայրենադարձությունը, փուլերը, արդյունքները
- Սփյուռքի և Խորհրդային Հայաստանի հարաբերությունները
- 1990 ական թթ. զանգվածային արտագաղթը և Սփյուռքի ստվարացումը: Սփյուռքի հիմնական
  կենտրոնները և նոր համայնքներն այսօր
- Հայ առաքելական եկեղեցու դերն ու գործունեությունը սփյուռքահայերի կյանքում
- Սփյուռքահայերի պայքարը (կուսակցություններ, համայնքներ, հասարակական և բարեգործական կազմակերպություններ, հայրենակցական միություններ, Հայոց եկեղեցի, անհատներ) Հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման և հայապահպանության համար
- Հայրենիք – Սփյուռք հարաբերությունների ամրապնդումը և զարգացումը: Սփյուռքահայ երիտասարդության արդի խնդիրները
- Սփյուռքահայ մշակույթը, համաշխարհային ձեռքբերումներ: Սփյուռքահայ նշանավոր գործիչներ

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	Ընդհանրական խաչվող հասկացություններ
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված	• **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների

տեղեկատվության վերլուծություն ● հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) ● աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում ● ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք ● սահիկաշարերի պատրաստում ● պաստառների ձևավորում ● նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում ● նպատակային զրույցների ու հարցազրույցների վարում անհատների և տարբեր խմբերի հետ ● թեստային աշխատանքերի կատարում ● երևակայական ճանապարհորդություն ● ֆիլմերի դիտում և քննարկում ● էքսկուրսիոն դասեր որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում ● խաղեր, մրցույթներ, վիկտորիաներ ● բանավեճեր, քննարկումներ ● դեպքի ուսումնասիրություն ● նկարի վերլուծություն ● խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում ● ռեֆերատ	և իրադարձությունների օրինաչափություններ: ● **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: ● **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: ● **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: ● **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը ● **Գիտատեխնիկական նորարարություն** Դիտարկել գիտական և տեխնոլոգիական նվաճումների ու քաղաքակրթական ձեռբերումների ազդեցությունը կյանքի, հասարարական զարգացման և առաջընթացի վրա:

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն – XX դարի միջպետական կառույցներ, աշխարհի երկրներ, կոնֆլիկտներ, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, ձեռքբերումներ և այլն **Աշխարհագրություն**- աշխարհի երկրներ՝ տարածք, բնակչություն. բնակլիմայական պայմաններ, բնական հարստություններ և այլն, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտություն** - «Մարդ ճաշակ-մշակույթ», «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ» թեմաներ **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում, արևմտահայերեն և արևելահայերեն լեզուներ **Գրականություն** – գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ **ՆԶՊ**- զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն, **Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր **Բնագիտամաթեմատիկական առարաներ** – հայտնագործություններ, նորարարություններ, ձեռքբերումներ
Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները- Հ 1, Հ 2, Հ 10, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 23, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45,Հ 46

Թեմա 19
Հայացք ապագային. Հայության հարատևման գրավականները (5 ժամ)
Նպատակ
• Արժևորի և փաստերով հիմնավորի անկախ, ինքնիշխան, զորեղ, ազգային պետություն ունենալու անհրաժեշտությունը, եզրահանգումներ անի Հայաստանի Հանրապետության ներքաղաքական և միջազգային աշխարհաքաղաքական զարգացումների հեռանկարների վերաբերյալ, ըմբռնի և գնահատի իր դերն ու մասնակցության անհրաժեշտությունը Հայոց մրցունակ պետության կայացման և զարգացման գործում: • Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի ու ձեռքբերումների յուրացման, դասեր

քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:

- Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ:

Վերջնարդյունք

1. Առանձնացնի ազգային հիմնախնդիրները և հայության առջև ծառացած մարտահրավերները, դրանց լուծման և հաղթահարման վերաբերյալ փորձի առաջարկել ուղիներ ու կանխատեսել դրանց արդյունքներն ու հետևանքները, գնահատի իր դերն ու մասնակցության անհրաժեշտությունը Հայոց զորեղ և մրցունակ պետության կայացման և զարգացման գործում:
2. Քննարկի արդի աշխարհի հետ բազմատեսակ կապերը, աշխարհաքաղաքական արդի զարգացումների համատեքստում ուրվագծի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, անի կանխատեսումներ դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:
3. Արժևորի մայրենի լեզվի, ազգային ավանդույթների, հոգևոր և բարոյական հիմնարար արժեքների դերը հայապահպանության գործում, գիտակցի դրանք պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը և իր նպաստը բերի այդ արժեքները հանրահռչակելու գործում:
4. Բացատրի և արժևորի պետության և Հայոց եկեղեցու՝ որպես ազգային-հոգևոր կառույցի, համագոր-ծակցության անհրաժեշտությունն ու նշանակությունը հայապահպանության և Հայաստանի զարգացման ու զորեղացման գործում, իր նպաստը բերի Հայոց եկեղեցու զորեղացման գործում:
5. Ցույց տա ազգային պետական, հասարակական, հոգևոր անձնական շահերի միասնականության և սփյուռքի հետ համագործակցության ամրապնդման անհրաժեշտությունը՝ դրված նպատակների իրականացման, մարտահրավերների հաղթահարման և մրցունակ պետության կայացման և հայապահպանության գործում:
6. Կապեր գտնի արդի և պատմական գործընթացներում, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի և հիմնավորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:
7. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, առաջադրի խնդիրներ և ներկայացնի լուծումներ:
8. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, որոշի, բնութագրի աղբյուրի արժանահավատությունը, արտահայտի և հիմնավորի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

Թեմայի բովանդակություն

- Հայաստանի Հանրապետության առջև ծառացած մարտահրավերները, ազգային հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիներն ու հեռանկարները
- Ազգային, պետական անձնական և հոգևոր շահերի միասնության, սփյուռքի հետ համագործակցության ամրապնդման անհրաժեշտությունը Հայաստանի զարգացման, զորեղացման և հայապահպանության գործում
- Ազգային (հայրենիք, լեզու, դավանանք, ընտանիք) և հոգևոր-բարոյական արժեքների, ավանդույթների դերը հայության հարատևման գործում
- Ազգային մշակույթի կարևոր ձեռքբերումները և դրանց դերը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում
- Ազգային-հոգևոր կառույցի՝ Հայոց եկեղեցու դերն ու նշանակությունը հայապահպանության և Հայաստանի զարգացման ու զորեղացման գործում

Ուսումնական գործունեություն (երաշխավորվող ձևեր)	Ընդհանրական խաչվող հասկացություններ
• ուսումնական նյութի ներկայացում, մեկնաբանում, քննարկում • սկզբնաղբյուրների հետ աշխատանք, աղբյուրների ուսումնասիրություն • զանգվածային լրատվամիջոցներից, համացանցից ստացված տեղեկատվության վերլուծություն • հիմնախնդիրների հետազոտում (անհատական, զույգեևով կամ խմբային) • աղյուսակների, գծակարգերի, գծապատկերների կազմում • ուսումնաօժանդակ նյութերի հետ աշխատանք • սահիկաշարերի պատրաստում • պաստառների ձևավորում • նշանավոր անձանց մասին տեղեկությունների հավաքում, գրավոր և բանավոր հաղորդումների, էսսեների, ակնարկների պատրաստում • նպատակային զրույցների ու հարցազրույցների վարում անհատների և տարբեր խմբերի հետ • թեստային աշխատանքների կատարում	• **Օրինաչափություն** Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ: • **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայուն զարգացում** Դիտարկել հասարակությունների և համակարգերի, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, դրանց ազդեցությունը և հետևանքները մարդկության և շրջակա միջավայրի վրա: • **Անհատներ և հարաբերություններ** Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: • **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու

• երևակայական ճանապարհորդություն • ֆիլմերի դիտում և քննարկում • էքսկուրսիոն դասեր որևէ պատմական հուշարձանի տարածքում, թանգարանում • խաղեր, մրցույթներ, վիկտորիաներ • բանավեճեր, քննարկումներ • դեպքի ուսումնասիրություն • նկարի վերլուծություն • խնդիրների առաջադրում և լուծումների ներկայացում ու քննարկում • ռեֆերատ	սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: • **Անհատական և մշակութային արտահայտում** Արժևորել ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը • **Գիտատեխնիկական նորարարություն** Դիտարկել գիտական և տեխնոլոգիական նվաճումների ու քաղաքակրթական ձեռբերումների ազդեցությունը կյանքի, հասարարական զարգացման և առաջընթացի վրա:

Միջառարկայական կապերը թեմայում

Համաշխարհային պատմություն – XX դարի միջպետական կառույցներ, աշխարհի երկրներ, կոնֆլիկտներ,հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, ձեռքբերումներ և այլն

Աշխարհագրություն- աշխարհի երկրներ՝ տարածք, բնակչություն. բնակլիմայական պայմաններ, բնական հարստություններ և այլն, քարտեզների հետ աշխատանք

Հասարակագիտություն - «Մարդ ճաշակ-մշակույթ», «Արժեքներ», «Մտածողություն, հուզական բանականություն և վարք», «Հետազոտական և կառավարչական հմտություններ», «Պետություն», «Պետություն և մշակույթ, «Պետություն և քաղաքացիական հասարակություն», «Պետություն և տնտեսություն, «Պետություն և քաղաքականություն» թեմաներ

Հայոց լեզու – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում

Գրականություն – գրողներ, բանաստեղծներ, ստեղծագործություններ

ՆԶՊ- զենքեր , ռազմարվեստ, մարտավարություն,

Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ) -մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր

Բնագիտամաթեմատիկական առարաներ –հայտնագործություններ, նորարարություններ, ձեռքբերումներ

Կապը Հանրակրթության չափորոշչի միջին դպրոցի վերջնարդյունքների հետ
Հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունք-ները - Հ 1, Հ 2, Հ 10, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 23, Հ 25, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45,Հ 46

Նախաքննական կրկնություն 7 ժամ

10-րդ դասարան

Թեմա՝ 1 (12 ժամ)
Առաջին կենտրոնացված համահայկական պետությունները Հայկական լեռնաշխարհում
Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի Արարատյան և Երվանդական համահայկական թագավորության ստեղծման ու անկման պատճառահետևայնքային կապերը, ընկերային կառուցվածքի դերը պետության կյանքում:
Վերջնարդյունք
1.Հիմնավորի համահայկական առաջին պետութունների պատմության առանցքային երևույթների պատճառա-հետևանքային կապերը, կարողանա ըմբռնել և ներկայացնել վերոգրյալ երևույթների խորքային ընթացքը, տալ գնահատական տվյալ երևույթներին 2.Բացատրի առանցքային եզրույթներն ու հասկացությունները: 3.Վերլուծի Արարատյան թագավորության անկման նախադրյալները, այն դիտարկելով համաշխարհային զարգացումների համատեքստում: 4 Վերլուծի հայկական քաղաքակրթության և հարևան քաղաքակրթությունների մշակութային փոխգործակցությունները:
Թեմայի բովանդակություն

1. Արարատյան թագավորության ձևավորման պատճառները և հաստատումը. Անցումը ցեղային միություններից կենտրոնացված պետության
2. Հայկական լեռնաշխարհի քաղաքական, տնտեսական ու մշակութային միավորման նախադրյալները և ընթացքը (ընդհանուր քաղաքաշինական միջավայր ընդհանուր դիցարան, արարատյան սեպագրեր)
3. Թագավորությունից աշխարհակալություն. Կենտրոնացված կառավարում արհեստավարժ բանակ, Արարատյան թագավարորություն- Ասորեստան հակադրություն. Տարածաշրջանային տերություն
4. Թագավորության փլուզման նախադրյալները
5. Ընկերային-տնտեսական կյանքը. Վաղ ստրկատիրական հասարակություն
6. Երվանդական Հայաստանը . Հայաստանը 7-6 դդ.
7. Հայկական և իրանական քաղաքակրթություններ մեկտեղումը մեկ տերության սահմաններում

Գործնական աշխատանք	Ընդհանրական գաղափարներ
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	**Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:

Միջառարկայական կապերը թեմայում

Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացների իմացություն
Աշխարհագրություն – Արարատյան թագավորության պատմաաշխարհագրական տարածքի իմացություն
Հայ գրականություն – առասպելներ

Հանրակրթական չափորոշիչ
Մ11, Մ14, Մ16, Մ17

Թեմա՝ 2 (12 ժամ)
Միասնական հայկական պետությունից մինչև աշխարհակալ տերություն:
Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի Արտաշեսյան թագավորության ստեղծման ու անկման պատճառահետևանքային կապերը, ընկերային կառուցվածքի դերը պետության կյանքում:
Վերջնարդյունք
1. Հիմնավորել Արտաշեսյան թագավորության ձևավորման պատճառա-հետևանքային կապերը 2. բացատրել Արտաշեսի բարեփոխումների տրամաբանական դրդապատճառները 3. Քննել թագավորությունից տերության անցման անկման նախադրյալները դա դիտարկելով համաշխարհային զարգացումների համատեքստում 4. Վերլուծել հայկական քաղաքակրթության և հելլենականության ընդհանրություններն ու հակադրությունները
Թեմայի բովանդակություն
1. Նոր աշխարհակարգի ձևավորումը Մերձավոր Արևելքում. Արտաշեսյան թագավորության ձևավորումը 2. Կենտրոնացված պետության ձևավորումը. Բանակ. Վարչական բարեփոխումներ Տնտեսություն 3. Հելլենականությունը և Հայաստանը. Քաղաքաշինական միջավայր, դիցարան 4. Տերության ձևավորման աշխարհաքաղաքական միջավայրը. 5. Աշխարհակալ բազմազգ տերություն. Բազմամշակութային միջավայր 6. Աշխարհակալ բազմազգ տերության համակեցական միջավայրը

Գործնական աշխատանք	Ընդհանրական գաղափարներ
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում	. **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայունություն** Ի՞նչ է փոխկապակցվածությունը:

Էսսեի ներկայացում	Սովորողները ուսումնասիրում են մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածությունը, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, հնարավորությունները, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա:

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացների իմացություն **Աշխարհագրություն** – Տիգրանյան տերության պատմաաշխարհագրական տարածքի իմացություն **Հայ գրականություն –** առասպելներ
Հանրակրթական չափորոշիչ
Մ11, Մ14, Մ16, Մ17

Հայոց պատմություն Թեմա՝ 3 (12 ժամ)
Պետականաշինության գործընթացը վաղ ավատատիրության շրջանում:
Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի ավատատիրական փոխհարաբերությունների զարգացումը, քրիստոնեության ընդունման պատճառներն ու ազդեցությունը, Արշակունյաց թագավորության փլուզման արտաքին ու ներքին պատճառներ:
Վերջնարդյունք
1. Հիմնավորի Արշակունյաց թագավորության թուլացման պատճառա-հետևանքային կապերը 2. Բացատրի եկեղեցի-նախարարական համակարգ-պետություն փոխհարաբերությունների զարգացման տրամաբանությունը 3. Քննի ավատատիրական հարաբերությունների ձևավորման ընթացքը 4. Վերլուծի հայ-պարսկական և հայ-հռոմեական հարաբերությունները

Թեմայի բովանդակություն	
1. Արշակունյաց թագավորության ձևավորման նախադրյալները. Հայաստանը երկու գերտերությունների միջև 2. Ընկերային-տնտեսական առօրեական կյանքը Արշակունյաց Հայաստանում 3. Քրիստոնեության ընդունումը Պետական կրոն 4. Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները 5. Ավատատիրական հասարակությունը. Պետության թուլացումը և անկումը 6. Տարածաշրջանային ուժերի հարաբերակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին քաղաքականության վրա	
Գործնական աշխատանք	**Ընդհանրական գաղափարներ**
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	**Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացների իմացություն **Աշխարհագրություն** – Մեծ Հայքի պատմաաշխարհագրական տարածքի իմացություն **Հայ գրականություն –** առասպելներ	
Հանրակրթական չափորոշիչ	
Մ11, Մ14, Մ16, Մ17	

Թեմա՝ 4 (14 ժամ)
Զարգացած ավատատիրության փուլը. Բագրատունյաց պետականությունը
Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի Բագրատունյաց թագավորության դերը հայ իրականության մեջ, թագավորության ստեղծման ու անկման պատճառահետևանքային կապերը, քաղաքակրթական ժառանգությունը:
Վերջնարդյունք
1. Գնահատի տնտեսական զարգացման և մշակութային վերելքի փոխկապակցվածությունը 2. Բացատրի ավատատիրության զարգացման խորքային պատճառները 3. Փաստարկի տարածաշրջանային զարգացումների ազդեցությունը պետության անկման հարցում 4. Վերլուծի Բագրատունյաց թագավորության անկման պատճառները
Թեմայի բովանդակություն
1. Բագրատունյաց թագավորության ձևավորման արտաքին ու ներքին նախադրյալները 2. Զարգացած ավատատիրական հասարակությունը 3. Միջազգային իրադրության փոխակերպումները. Արաբական վտանգից-բյուզանդական վտանգ 4. Շահշնահ-կախյալ թագավորություններ փոխհարաբերությունները 5. Ընկերային-տնտեսական կյանքը. Դրամաշրջանառության աճը. Հավելյալ արժեքի փոխակերպումը մշակութային արժեքների. առօրեական կյանքը

Գործնական աշխատանք	**Ընդհանրական գաղափարներ**
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	**Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային

	փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը: **2Անհատական և մշակութային արտահայտում** Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը: Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտությանը և ստեղծարարությունը:

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացների իմացություն **Աշխարհագրություն** – Անիի և կախյալ թագավորությունների վարչա-քաղաքական և աշխարհագրական միջավայրի իմացություն
Հանրակրթական չափորոշիչ
Մ11, Մ14, Մ16, Մ17

Հայոց պատմություն Թեմա՝ 5 (14 ժամ)
Կիլիկյան հայկական պետությունը
Նպատակ

Աշակերտը կուսումնասիրի Կիլիկյան հայոց թագավորության ստեղծման ու անկման պատռառահետևանքային կապերը, միջնադարի մերձավոր արևելյան և եվրոպական քաղաքակրթությունների դերակատարությունը, կիլիկյան թագավորության հայկական քաղաքակրթական դոմինանտությամբ սինթեզային բնույթը:
Վերջնարդյունք
1. Գնահատի ռազմա-քաղաքական նոր միջավայրի ձևավորման պատճառա-հետևանքային կապերը 2. Բացատրի Կիլիկիայում հայկական պետության ձևավորման պատճառները 3. Փաստարկի տարածաշրջանային զարգացումների ազդեցությունը պետության անկման հարցում 4. Վերլուծի բազմամշակութային միջավայրի ձևավորման պատճառները
Թեմայի բովանդակություն
1.Հայկական միջավայրի ձևավորման նախադրյալները Կիլիկիայում և շրջակա տարածքներում 2. Հայկական պետական կառավարման համակարգի ներդնումը և սինթեզումը տեղական միջավայրում 3.Բազմամշակութային միջավայրը Կիլիկիայում. Նոր սինթեզային հայկական քաղաքակրթությունը 4. Կիլիկյան թագավորության և Հայոց կաթողիկոսության համահայկականության նոր կոնցեպտը.Եկեղեցի-պետություն համագործակցություն 5. Թագավորության արտաքին քաղաքական միջավայրը և դիվանագիտությունը 6.Ընկերային-տնտեսական և առօրեական կյանքը 7. Թագավորության անկումը. Հայկական պետականության դրսևորումները Կիլիկիայում պետականության անկումից հետո 8. Քաղաքակրթական ձեռքբերումները

Գործնական աշխատանք	**Ընդհանրական գաղափարներ**
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	**1.Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում,

	ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացների իմացություն **Աշխարհագրություն** – Հայոց թագավորության և շրջակա երկրների վարչա-քաղաքական և աշխարհագրական միջավայրի իմացություն
Հանրակրթական չափորոշիչ
Մ11, Մ14, Մ16, Մ17

11-րդ դասարան

Հայոց պատմություն Թեմա՝ 1 (12 ժամ)
Պայքար ինքնության պահպանման համար 5-6 դդ
Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի 5-6-րդ դդ. ինքնութենական, միջնադարյան դավանաբանական պայքարը, մշակութային ինքնության ձևավորման անհրաժեշտությունը:
Վերջնարդյունք
1. Քննի նախարարական համակարգի դերակատարումը 5-6 դդ. ազատագրական պայքարում 2. Հիմնավորի դավանաբանական ինքնության անհրաժեշտությունը 3. Քննի տարածաշրջանային զարգացումների ազդեցությունը ազատագրական պայքարի վրա 4. Վերլուծի մշակութային ինքնության կարևորությունը

Թեմայի բովանդակություն
1. Նախարարական համակարգը ինքնության պահպանման գրավական 2.Մշակութային ինքնության ձևավորումը. Գրերի գյուտ. Ոսկեդար 3. Դավանական ինքնության ձևավորումը. Հայոց եկեղեցու ինքնուրույնության հաստատումը 4. Մշակութային-քաղաքակրթական վերելք 5. Պետականության վերականգնման փորձեր (5-րդ դար)

Գործնական աշխատանք	**Ընդհանրական գաղափարներ**
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	. **1.Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը: 2. **Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ** Որտե՞ղ և Ե՞րբ Սովորողները ուսումնասիրում են տարբեր մարդկանց կենցաղը, նրանց պատմությունները, ճանապարհորդությունները, մարդկության պատմության շրջադարձային կետերը, հայտնագործությունները, գյուտերը,

	ինչպես նաև անհատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացների իմացություն **Աշխարհագրություն** – վաղ միջնադարի վարչա-քաղաքական և աշխարհագրական միջավայրի իմացություն
Հանրակրթական չափորոշիչ
11, 14, 16, 17

Հայոց պատմություն Թեմա՝ 2 (12 ժամ)
Ինքնությանը սպառնացող մարտահրավերները 7-9 դդ.
Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի 7-9-րդ դդ. ազատագրական պայքարը, որպես ինքնության պահպանման ցուցիչ:
Վերջնարդյունք
1. Գնահատել տնտեսական զարգացման և մշակութային վերելքի փոխկապակցվածությունը 2. Բացատրել արաբական քաղաքականության պատճառները 3. Քննել ազատագրական պայքարում առկա մոտեցումները 4. Վերլուծել աշխարհաքաղաքական միջավայրի փոփոխությունները 5. Գնահատել հայկական աղանդավորական շարժումները տարածաշրջանային և համաշխարհային համատեքստում
Թեմայի բովանդակություն
1.Իսլամական սպառնալիքը և Հայաստանը.արաբական քաղաքականությունը Հայաստանում. Ինքնության պահպանումը

2.Նախարարական համակարգը նոր միջավայրում. 3. Օտար բնակչության աստիճանական ներթափանցումը Հայաստան. Հայկական արտագաղթի սկզբնավորումը 4. Ոչ պաշտոնեական քրիստոնեական ուսմունքները հայ իրականության մեջ. 5.Պայքարի երկու ուղղություններ. Բագրատունիներ-Մամիկոնյաններ. 6. Մշակութային ինքնության վերելքը. Հայոց էպոս.

Գործնական աշխատանք	Ընդհանրական գաղափարներ
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	**Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացների իմացություն **Աշխարհագրություն** – Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության վարչա-քաղաքական և աշխարհագրական միջավայրի իմացություն

Հանրակրթական չափորոշիչ
Մ11, Մ14, Մ16, Մ17

Թեմա՝ 3 (12 ժամ)
Ազատագրական պայքարի գաղափարական փուլը

Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի հայ լուսավորականության դերը հայկական քաղաքակրթության պահպանման ու զարգացման գործում:
Վերջնարդյունք
1. Գնահատի տվյալ շրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը 2. Տարբերակի այդ ուղղությունների դրական և բացասական կողմերը 3. Քննի հայկական լուսավորականության առանձնահատկությունները 4. Վերլուծի աշխարհաքաղաքական միջավայրի փոփոխությունները 5. Գնահատի հայկական ազատամտական ու ընկերվարական գաղափարները համաշխարհային պրակտիկայի համտեքստում
Թեմայի բովանդակություն
1. Պայքարի եվրոպական և ռուսական ուղղությունները. 2. Հայկական լուսավորականություն. Հ. Էմինը և Մադրասի խմբակը. Հանրապետության գաղափարը 3. Ազատամտականություն և ընկերվարություն

Գործնական աշխատանք	Ընդհանրական գաղափարներ
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	.**Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության

	գիտակցումը

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների հասարակական քաղաքական գործընթացների իմացություն **Աշխարհագրություն** – Ռուսական, Օսմանյան և Պարսկական տերությունների աշխարհագրական միջավայրի իմացություն
Հանրակրթական չափորոշիչ
Մ11, Մ14, Մ16, Մ17

Թեմա՝ 4 (12 ժամ)
Ինքնության համար պայքարը 20-րդ դ.
Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի 20-րդ դարի ազատագրական շրջափուլերը և դրա դերը աշխարհաքաղաքական միջավայրի և գաղափարաբանական միջավայրի փոփոխություններում:
Վերջնարդյունք
1. Քննի սփյուռքի ձևավորման դրդապատճառները 2. Համեմատի հայկական զինված պայքարի գաղափարաբանությունը բալկանյան ազատագրական պայքարի հետ 3. Քննի ցեղասպանության դրդապատճառներն ու հետևանքները հայկական ինքնութենական միջավայրի վրա 4. Վերլուծի աշխարհաքաղաքական միջավայրի փոփոխությունը.Հայկական ռազմա-քաղաքական գործոնի ձևավորումը 1917-18 թ. 5. Գնահատի Արցախյան պատերազմի ազդեցությունը հայկական ինքնության տեսանկյունից
Թեմայի բովանդակություն
1.Զինված պայքարը. Հայդուկային շարժումից մինչև համընդհանուր ապստամբության գաղափար 2. Ցեղասպանություն.Ինքնութենական ազդեցություն

3.Մայիսյան հերոսամարտը. 4.Հայրենազրկում 5. Սփյուռքի կազմավորումը.Ինքնության պահպանման խնդիրը 6.Ինքնութենական գաղափարախոսություն - ազատամտություն, ընկերվարություն, ազգայնականություն 7. Արցախյան պատերազմը, ազդեցությունը հայկական ինքնության վրա	
Գործնական աշխատանք	**Ընդհանրական գաղափարներ**
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	**1.Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը: 2. **Կողմնորոշում ժամանակի և տածության մեջ** Որտե՞ղ և Ե՞րբ Սովորողները ուսումնասիրում են տարբեր մարդկանց կենցաղը, նրանց պատմությունները, ճանապարհորդությունները, մարդկության պատմության շրջադարձային կետերը, հայտնագործությունները, գյուտերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության միջև

	հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացների իմացություն **Աշխարհագրություն** – 20-րդ դարի տարածաշրջանի պետությունների աշխարհագրական միջավայրի իմացություն
Հանրակրթական չափորոշիչ
Մ11, Մ14, Մ16, Մ17

Թեմա՝ 5 (12 ժամ)
Անկախության վերականգնումը 20-րդ դարավերջին
Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի արցախյան շարժման պատռառահետևանքային կապերը: Կդիտարկի այն, որպես մոդել անկախություն տանող ճանապարհին:
Վերջնարդյունք
1. Համեմատի արցախյան գաղափարաբանությունը խորհրդային այլ երկրների ազատագրական պայքարի հետ 2. Քննել շարժման դրդապատճառներն ու հետևանքները 3. Վերլուծի աշխարհաքաղաքական միջավայրի փոփոխությունը. 4. Գնահատի Արցախյան շարժման ազդեցությունը հայկական պետականության վերականգման հարցում
Թեմայի բովանդակություն
1.Շարժման ակունքները 2. Լեռնային Արցախը Ադրբեջանի կազմում. Տնտեսական ու քաղաքական ճնշումները

3. Շարժման ազատական էությունը 4. Անկախության նվաճումը	
Գործնական աշխատանք	**Ընդհանրական գաղափարներ**
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	**1.Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը: 2. **Կողմնորոշում ժամանակի և ածության մեջ** Որտե՞ղ և Ե՞րբ Սովորողները ուսումնասիրում են տարբեր մարդկանց կենցաղը, նրանց պատմությունները, ճանապարհորդությունները, մարդկության պատմության շրջադարձային կետերը, հայտնագործությունները, գյուտերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացների իմացություն **Աշխարհագրություն** – 20-րդ դարի տարածաշրջանի պետությունների աշխարհագրական միջավայրի իմացություն
Հանրակրթական չափորոշիչ
11, 14, 16, 17

12-րդ դասարան

Թեմա՝ 1 (12 ժամ)
Ազգային զարթոնքը. Հայկական այլախոհություն
Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի 20-րդ դարի հայկական այլախոհական շարժումները ու դրանց ազդեցությունը հասարակության կառուցման գործում:
Վերջնարդյունք
1. Քննի հայկական պահանջատիրության անցած ճանապարհը 20-րդ դարում. Հնարավոր զարգացումները 2. Վերլուծի նոր ազգային, առաջադեմ երիտասարդության և մտավորականության ի հայտ գալու նախադրյալները ՀԽՍՀ-ում, վերլուծել համաշխարհային ընդհանրական տենդենցեների համատեքստում 3. Գնահատի 1960թթ. ազգային շարժումը ՀԽՍՀ-ում
Թեմայի բովանդակություն
1.Նոր երիտասարդության ձևավորումը ՀԽՍՀ-ում 2. 1960 թթ. շարժումը 3.Ազգային հարցը ՀԽՍՀ-ում 4. Հայկական պահանջատիրություն

Գործնական աշխատանք	Ընդհանրական գաղափարներ
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	**1.Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ եմ ես: Ո՞վ ենք մենք: Սովորողները ուսումնասիրում են անհատների կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները, ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը: 2. **Կողմնորոշում ժամանակի և տածության մեջ** Որտե՞ղ և Ե՞րբ Սովորողները ուսումնասիրում են տարբեր մարդկանց կենցաղը, նրանց պատմությունները, ճանապարհորդությունները, մարդկության պատմության շրջադարձային կետերը, հայտնագործությունները, գյուտերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթության միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների հասարակական քաղաքական շարժումների և գործընթացների իմացություն	

Աշխարհագրություն – 20-րդ դարի պետությունների աշխարհագրական միջավայրի իմացություն
Հանրակրթական չափորոշիչ
Մ11, Մ14, Մ16, Մ17

Թեմա՝ 2 (12 ժամ)
Խորհրդահայ հասարակությունը
Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի Հայաստանում արդյունաբերական հասարակության ձևավորմը, հայկական գյուղում տեղի ունեցած ընկերային կյանքի փոփոխությունները, գյուղական կյանքի առանձնահատկությունները:
Վերջնարդյունք
1. Քննի նորագույն շրջանի հայկական հասարակության ընկերային կառուցվածքը, գաղափարական նորարարությունները, համադրի այն ժամանակակի այլ պետությունների կառուցվածքի հետ: 2. Վերլուծի Խորհրդային Հայաստանի արդյունաբերականացման նախադրյալները: 3. Հիմնավորի հայկական արդյունաբերական հասարակության առանձնահատկությունները. Համադրի այն եվրոպական և մերձավորարևելյան իրականության հետ: 4. Աղբյուրագիտական հենքի վրա ներկայացնի խորհրդահայ հասրակության առօրեական կյանքը
Թեմայի բովանդակություն
1.Արդյունաբերական հասարակություն. Հասարակության տիպաբանությունը. 2. Գյուղական կենցաղի փոփոխություններ 3.Հայրենադարձների ներդրումը քաղաքային կյանքի զարգացման հարցում 4. Խորհրդահայ քաղաքացու առօրեական կյանքը 5. Հայ քաղաքացիները ԽՍՀՄ այլ հանրապետությունների կազմում(Վրաստան, Ռուսաստան)

Գործնական աշխատանք	Ընդհանրական գաղափարներ
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	**Գիտատեխնիկական նորարարություն** Ինչպե՞ս ենք գնահատում այն աշխարհը, որտեղ ապրում ենք: Սովորողները ուսումնասիրում են բնությունը, դրանց օրենքները, փոխազդեցությունը մարդկանց և բնության միջև, գիտական և տեխնոլոգիական նվաճումների ազդեցությունը համայնքի և շրջակա միջավայրերի վրա, շրջակա միջավայրի ազդեցությունը մարդկային գործունեության վրա, շրջակա միջավայրի հարմարեցումը մարդու կարիքներին:

Միջառարկայական կապերը թեմայում
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացների իմացություն **Աշխարհագրություն** – 20-րդ դարի քաղաքական աշխարհագրության իմացություն
Հանրակրթական չափորոշիչ
Մ11, Մ14, Մ16, Մ17

Թեմա՝ 3 (12 ժամ)
Գիտական և տնտեսական նորարարություն
Նպատակ
Աշակերտը կուսումնասիրի արդյունաբերականացման քաղաքականությունը, կոլեկտիվիզացիայի և քաղաք-ձեռնարկությունների ձևավորման առանձնահատկությունները:

Վերջնարդյունք
1. Վերլուծի կրթական և գիտական նորարարության ընթացքը Հայաստանում 20-րդ դարում: 2. Քննի նորագույն շրջանի հայկական հասարակության ընկերային կառուցվածքը, գաղափարական նորարարությունները, համադրի այն ժամանակակից այլ պետությունների կառուցվածքի հետ: 3. Վերլուծի Խորհրդային Հայաստանի արդյունաբերականացման նախադրյալները: 4. Հիմնավորի հայկական արդյունաբերական հասարակության առանձնահատկությունները. Համադրի այն եվրոպական և մերձավորարևելյան իրականության հետ:
Թեմայի բովանդակություն
1.Երկրի արդյունաբերականացումը 2. Կոլեկտիվիզացիա 3.Քաղաք-ձեռնարկություն համակարգի ձևավորումը 4. Գիտության վերելքը. Գիտություն-տնտեսություն փոխկապակցվածություն

Գործնական աշխատանք	Ընդհանրական գաղափարներ
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսեի ներկայացում	**Գիտատեխնիկական նորարարություն** Ինչպե՞ս ենք գնահատում այն աշխարհը, որտեղ ապրում ենք: Սովորողները ուսումնասիրում են բնությունը, դրանց օրենքները, փոխազդեցությունը մարդկանց և բնության միջև, գիտական և տեխնոլոգիական նվաճումների ազդեցությունը համայնքի և շրջակա միջավայրերի վրա, շրջակա միջավայրի ազդեցությունը մարդկային գործունեության վրա, շրջակա միջավայրի հարմարեցումը մարդու կարիքներին:
Միջառարկայական կապերը թեմայում	

Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների տնտեսական գործընթացների իմացություն **Աշխարհագրություն** – 20-րդ դարի քաղաքական աշխարհագրության իմացություն
Հանրակրթական չափորոշիչ
Մ11, Մ14, Մ16, Մ17

Թեմա՝ 4 (12 ժամ)	
Մշակութային և կրթական նորարությունը. Երևանը մշակութային կենտրոն	
Նպատակ	
Աշակերտը կուսումնասիրի Հայաստանում մշակութային կյանքի զարգացման առանձնահատկություններն ու դերակատարումը հասարակության կյանքում:	
Վերջնարդյունք	
1. Վերլուծի կրթական և գիտական նորարարության ընթացքը Հայաստանում 20-րդ դարում: 2. Վերլուծի Խորհրդային Հայաստանի մշակութային զարգացման նախադրյալները: 3. Հիմնավորի հայկական մշակութային հաջողությունները համաշխարհային իրականության համատեքստում	
Թեմայի բովանդակություն	
1.Համալսարանական կյանքի վերածնունդը 2. Խորհրդային Հայաստանը խորհրդային մշակութային կյանքի կենտրոն 3. Ֆորմալ և ոչ ֆորմալ մշակույթ, Հայկական արվեստի միջազգայնացումը	
Գործնական աշխատանք	**Ընդհանրական գաղափարներ**
Աղբյուրների ուսումնասիրություն Թեմատիկ պրեզենտացիաների ներկայացում Էսսե	**Անհատական և մշակութային արտահայտում** Ո՞րն է ստեղծարարության բնույթը և նպատակը:

	Սովորողները ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով մենք բացահայտում և արտահայտում ենք զաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ, արժևորում ենք գեղագիտությանը և ստեղծարարությունը:
Միջառարկայական կապերը թեմայում	
Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրների մշակութային գործընթացների իմացություն **Գրականություն-Համաշխարհային գրականության ձեռքբերումների հետ ծանոթություն**	
Հանրակրթական չափորոշիչ	
11, 14, 16, 17	